№ 76 ՈՒՐԲԱԹ, 15 ԱՊՐԻԼԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 15 ԱՊՐԻԼԻ № 76

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rèdaction „Mschak"
Խմբագրատան տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Կովկասից դուրս ապրող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торговъ. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Փարիզում՝ 8 Площадь Биржи.
ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ապրիլի 1-ից մինչև տարվայ վերջը 8 ռուբլի:
Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ:

Գօլօվինսկի պր. **ՑԻՐԿ-ՍՊՈՐՏ** Այսօր, ապրիլի 15-ին, 5-րդ օր **ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ**
ԸՄԲՇԱՄԱՐՏԻ
ղեկավարութեամբ Ի. Վ. Լեբեդեվի
Երկրորդ հէք «Սև Մասկայի»:
ԱՅՍՕՐ ԿԸՄԲՇԱՄԱՐՏԵՆ 4 ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ ԶՈՅԳԵՐ:
Կովկասեան մենամարտ՝ կովկասցի յայտնի ըմբիշ Իւակի հախէլի հրաւէրով—Բուլի հետ: Սինեմատօգրաֆի հետաքրքրական ծրագիր: Այսօր հրացանաձիգ կնոջ սէանսը: Պատրաստվում է ցիրկային շքեղ ծրագիր:
(առ.) 368. 1—1

ԱՂԲԻՒՐԻ, ԱՌՈՂՋԱՊԱՀԻ, ՏԱՐԱԶԻ խմբագրութիւնը, ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՕՆԸ և ՄԱՄՈՒԼԻ ԲԻՒՐՕՆ
ՏԵՂԱՓՈԽՎԵՑԻՆ
ԳՕԼՕՎԻՆՍԿԻ ՊՐՕՍՊԵԿՏԻ ՎՐԱ, տուն № 41 (Ցիրկի դիմաց), վերին յարկ:
առ. 30. 3—2

Այսօր, ուրբաթ, ապրիլի 15-ին
Թիֆլիսի Ժողովարանում
ղեկավարութեամբ տ. ՓԼ. ՎԱՐԴԱՆԵԱՆԻ
կը ներկայացվի առաջին անգամ Թիֆլիսում
I. ՄԱՆԿԱԿԱՆ ՕՊԵՐԱ.
ՍՈՒՆԿԵՐԻ ԻՐԱՐԱՆՑՈՒՄ
(Грибной переполохъ)
մուզ. Բիւխների
Երաժշտական բաժինը ղեկավարում է Ս. Միրզոյեան
Մանկական բալէտ տ. Օ. Կ. Վարդանեանի առաջնորդութեամբ:
II. ԴԻՎԵՐՏԻՍՄԵՆՏ
III. ԱՊՈԹԵՕԶ
Մուտքը՝ երեխաների համար 50 կ., մեծերի համար 1 ր.: Սկիզբը առաւ. ժամը 12-ին: Տոմսակները ծախվում են Սուզանաճեանի, Բօյաճեանի և Ալչվանգի խանութներում՝ Դվօրցօվայա փ., իսկ ներկայացման օրը Թիֆլիսի Ժողովարանի կասսայում:
առ. 362. 1—1

Առաջիկայ մայիսին լոյս կը տեսնեն
„ՅԱՐՈՒԹԻՒՆ"
ԼԷՎ ՏՕԼՍՏՕՅԻ.
Թարգմ. Տիգրան Յովհաննիսեանի
Երկրորդ (ուղղված) հրատարակութիւն
Գինը՝ ճանապարհածախսով՝ 1 ր. 50 կ., առանց ճանապարհածախսի՝ 1 ր. 25 կ., իսկ մինչև մայիսի 1-ը բաժանորդագրվողների համար 1 ր. (ճանապարհածախսով):
„ԱՌԱՆՑ ԴԱՒԱՆԱՆՔԻ"
Հ. ՍԵՆԿԵՎԻՉԻ
Թարգմ. (լեհերէնից) Տ. Յովհաննիսեանի
Երկրորդ (ուղղված) հրատարակութիւն
Գինը՝ ճանապարհածախսով՝ 1 ր. 50 կ., առանց ճանապարհածախսի՝ 1 ր. 25 կ., իսկ մինչև մայիսի 1-ը բաժանորդագրվողների համար 1 ր. (ճանապարհածախսով):
Դիմել թարգմանչին. Тифлисъ, улица Паскевича, 1. Присяжному повѣренному Тиграну Нерсесовичу Іоаннисянцу. Արտասահմանից՝ Tiflis (Russie), rue Paskevitch, 1, Tigran Ioannissian (avocat).
(առ.) 290. 10—6

ОДОЛЬ
Безспорно лучшее полосканіе
Առաջնակարգ գիտնականների միահամուռ կարծիքով՝ Օդօլը կատարելապէս համապատասխանում է առողջապահութեան բոլոր պահանջներին, հետևաբար և համարվում է ատամները մաքրող միջոցներից ամենալաւը:
առ. (M.74170/74189) 233. 1—1

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԻԹԵԱՆՑ
Ներքին եւ չղային հիւանդութիւնների
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կօչուբէևսկայա փող. № 22.
Ելիզավէտինսկի փողոցից՝ № 44 տան անկիւնը:
(ա. օ.) առ. 343. 100—4

ՍՏՈՐ ՎՐԻԺԱՌՈՒԹԻՒՆ

Մենք նորից ստիպված ենք արձանագրել սոսկալի յանցագործութեան մի երևոյթ, որը քայքայում է մեր ժողովրդի կեանքը:

Մեր խօսքը այն զազրելի վրիժառութեան վայրենի եղանակի մասին է, որ գործադրում են մեր գիւղացիները միմեանց դէմ մի քանի շրջաններում:

Չարագործ ձեռքերը նոյն իսկ չը քաշվեցին այն բանից, որ այս տարի չափազանց թանգ է և հազուագիւտ անասունների կերակրապաշարը, և անգըթաբար կրակի մատնեցին խոտի դէզերը մի շարք գիւղերում: Իսկ նորագոյն մի փաստ գալիս է հաղորդելու, որ նոյնպիսի չարագործ ձեռքեր մի ուրիշ շրջանում փորձել են կտրատել նորաբուսն վազերը և ոչնչացնել նրանց մի քանի բօստանում:

Որպիսի՜ անգթութիւն, որպիսի հակակուլտուրական վայրենի վարմունք:

Վրէժի այդ ամարդի եղանակը մի սոսկալի ժառանգութիւն է մնացել մեր ներկայ իրականութեանը անցեալի դառնաշունչ օրերից, երբ ամեն մի բարբարոսութիւն հնարաւոր էր համարվում, եթէ նա վրէժի լուծման համար էր գործադրված լինում:

Ոչնչացնել մարդկային աշխատանքի արդիւնքը, ոչնչացնել անասունների կերակուրը, ոչնչացնել այգու, բոստանի և պարտէզի բուսականութիւնը արմատից—դա մի յանցանք է, որը պէտք է ամենախիստ դատապարտութիւն գտնի հասարակական կարծիքի կողմից, որպէսզի նա համարվի մի անջնջելի ամօթ ու զազրելի ստորութիւն, արատաւոր այն հասարակութեան համար, որի շրջանում նա կատարվում է:

Եւ ինչն է սարսափելի այս տխուր երևոյթի ժամանակ. այն, որ դէզեր կրակ տուողը և բուսականութիւն ոչնչացնողը նոյն մշակ դասի մարդն է, նոյն գիւղական վիշտ ու ցաւը հասկացող ու զգացող գեղջուկն է:

Սոսկալի է մարդ արարածի խղճի դիմաց: Սոսկալի է բանականութեան դիմաց.

Գիւղական համայնքները շատ անգամ են գանգատվել այդ քայքայիչ և բարոյապէս ստորագոյն արարքի դէմ, բայց մինչև այժմ չեն կարողացել արմատախիլ անել այդ անտանելի յանցանքը:

Մի քանի գիւղերում կառավարչական մարմինները փորձեցին համայնքի հաշւով վարձատրել վնասված անհատներին, որպէսզի ստիպեն համայնքի անդամներին չը թագցնել յանցաւոր տարրերը իրանց շրջաններում: Եւ ժամանակաւորապէս այդ կարգադրութիւնը ունեցաւ դրական հետևանքներ: Բայց մի քանի ժամանակից յետոյ երբ վարչական մարմինները զբաղված էին ուրիշ հոգսերով, նորից սկսեցին կրկնվել քստմնելի դէպքերը նորանոր քայքայումներ առաջ բերելով գիւղացիների տնտեսութեան մէջ:

Վերջին տարիները մեր գիւղերում առհասարակ բազմացել են փոխադարձ թշնամութեան դէպքերը և մարդիկ վրիժառութեան տենդով բռնված՝ կանգ չեն առնում ոչ մի միջոցի առաջ վնասելու իրանց հակառակորդին, և մենք տեսնում ենք բացի վերև յիշված անպատեհութիւններից նաև մի շարք հնարովի գրպարտական բանսարկութիւններ, որ նրանք հրապարակ են նետում ոտնատակ տալու իրանց թշնամիներին:

Եւ մեր գաւառական քրօնիկօնը այնպիսի զզուելի դէպքեր հանդէս բերեց, որ մարդ չէ հաւատում իր աչքերին, թէ այդ բոլոր ստորութիւնները կատարվում են իրականութեան մէջ:

Երևոյթը վերին աստիճանի խաւար և սև է: Վրիժառութեան վայրենի եղանակը սոսկալի մի արտայայտութիւն է մեր ժամանակի բարքերի:

Այդ երևոյթի հետ հաշտվել չէ կարելի:

Ս. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 ապրիլի

Պետերբուրգ.—Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլօվիչի միջոցով օդագնացութեան գործիչների համագումարի շնորհաւորական հեռագրին, Կայսրը պատասխանեց. «Անկեղծ շնորհակալ եմ առաջին համառուսական օդագնացութեան համագումարից՝ արտայայտած զգացմունքների համար: ՆԻԿՈԼԱՅ»:

«Рѣчь» լրագրում ապրիլի 13-ին տպված էր մի լուր, երբ Խարբինում ձեռքից ձեռք անցնում է գինուորական մինիստր Սուխօմլինովի յուշագրերի պատճէնը, որ նա կազմել է ռուս-չինական վերջին միջադէպի առիթով: Ընդ սմին մատնանշված է, թէ Պետերբուրգից տեղեկացնում են, որ յուշագրում արտայայտված մտքերը խիստ դիմադրութեան հանդիպեցին ֆինանսների մինիստր Կօկօվցեվի կողմից և առաջ բերին ընդհարում վերջինի և Ստոլիպինի միջև, որը համակարծիք է Սուխօմլինովին: Յիշեալ լուրը բոլորովին մտացածին է:

—

Հէլսինգֆօրս.—Դատական ատեանը թոյլ չը տուեց կին-փաստաբան Մունդելլին հանդէս գալ ատեանում իբրև հաւատարմատար:

—

Լօնդօն.—Համայնքների պալատ: Պատասխանելով երաժշտութեան վարժուհի անգլուհի Մալեցկայայի՝ Վարշավայի բանտում բանտարկելու մասին տրված հարցին, արտաքին գործերի ստորասեկրէտարի օգնական Մակկինօն-Վուդը յայտնեց, թէ Մալեցկայան մեղադրվում է ռուս կառավարութեան դէմ դաւադրութեան մէջ: Նա՝ լեհական սօցիալիստական կուսակցութեան անդամ է և այդ չէր թագցնում նա ձերբակալվելուց յետոյ էլ: Շուտով Ռուսաստան գնալուց յետոյ Մալեցկայան չափազանց խիստ քաղաքական բնաւորութեան յայտարարութիւն արաւ և լուրջ նախազգուշացումն ստացաւ մեծ-բրիտանական հիւպատոսից: Հիւպատոսի տեղեկութիւնների համաձայն, Մալեցկայան ներկայ գործի քննութիւնից յետոյ արտաքսվելու է արտասահման և նրան կարգելվի վերադառնալ Ռուսաստան: Մեծ-բրիտանական դեսպանը արտաքին գործերի մինիստրութեան կառավարչին մի նոտա ներկայացրեց, որով խնդրում է թոյլ տալ բրիտանական հիւպատոսին այցելել կրկին Մալեցկայային և յոյս է յայտնում, որ գործը շուտով կը քննվի:

—

Բեռլին.—Լանդտագին ներկայացվեց օրինագիծ՝ յատկացնելու 253 միլիօն մարկ երկաթուղիների ցանցը ընդլայնելու և ստորերկրեայ ճանապարհներ շինելու համար:

Ֆրանսիական դեսպանը խորհրդակցեց այսօր Կիդերլեն-Վեխտերի հետ: Դեսպանը հաղորդեց այն ձեռնարկութիւնների մասին, որ Ֆրանսիան մտադիր է կատարել Մարօկկօյում, և յայտնեց՝ թէ Ֆրանսիան չէ մտորում որևէ հող գրաւելու: Ի պատասխանի դեսպանին յայտնվեց, թէ Գերմանիան առայժմ կը պահէ նախկին հանգիստ—դիտողական դրութիւնը: Ընդ սմին դեսպանին բացատրվեց, որ Գերմանիայի հասարակական կարծիքը սկսում է անհանգստութեամբ նայել դէպքերի զարգացման վրա, որովհետև գտնում է, որ շօշափվում են պայմանագրերով ճանաչված Գերմանիայի շահերը: Արտաքին գործերի մինիստրութիւնը ըստ երևոյթին նախազգուշացրել է գերմանական մամուլին անտեղի արշաւանք չը սկսելու, որովհետև այդ մամուլն այսօր արտայայտվում է աւելի հանգիստ:

—

Տանժէր.—Բոսսանի շէրիֆը սուլթանի և ֆրանսիական միսսիայի ցանկութեամբ մեկնեց Ֆէց՝ դրդելու ապստամբներին հնազանդվել:

—

Բուդապեշտ.—Սերբիական թագաւորը ապրիլի 24-ին, երկու օրով գալու է այստեղ:

—

Տօկիօ.—Կոկումինտէի կուսակցութեան հարցապնդմանը ֆինանսների մինիստրութիւնը հաղորդեց, որ պետական պարտքը առ 1 ապրիլի կազմում էր 2,650,395,115 իէն, որից արտաքին փոխառութիւնների գումարն է 1,447,215,716 իէն, ներքին՝ մէկ միլիարդ 203,179,399 իէն, բացի այդ՝ 10 միլիօնի երկաթուղային օբլիգացիաներ: Կառավարութեան պարտքն է 118,491,422 իէն: Մինչև ապրիլ վճարված է 453,773,823 իէն:

—

Պէկին.—Արտասահմանեան վերջին փոխառութիւնների առիթով չինական մամուլը միաբերան դատապարտում է կառավարութեան քաղաքականութիւնը, որ փոխառութիւններ է կնքում ինքնագլուխ առանց սահմանադրական պալատի, որ Չինաստանին խրում է օտարազգիների պարտքերի մէջ, որ գաղտնի համաձայնութիւններ է կապում օտարազգի սեղանաւորների սինդիկատների հետ: Ի նկատի ունենալով այն լուրերը, որ մօտիկ ապագայում կնքվելու են դարձեալ խոշոր փոխառութիւններ, լրագիրները հարց են տալիս, թէ ո՞ւր կը հասնեն ներկայ կառավարութեան անխղճութեան և անսկզբունքային գործունէութեան օրօք Չինաստանի այդօրինակ պարտքերը:

—

(Լրագիրներից)

Ապրիլի 3-ին Սէն-Կանտէնում բացվեց միացեալ սօցիալիստների կուսակցութեան կօնգրէսը: Հէնց առաջին օրը երևան եկաւ երկու հոսանք՝ յեղափոխական և վերանորոգչական: Առաջինների հռետոր բժ. Ռապօպորտը կշտամբեց Ժօրէսին Մօնիսի կաբինետի հետ խաղ խաղալու համար և Ժօրէսի՝ ներկայ կաբինետին երկու անգամ յայտնած վստահութիւնը անուանեց ամօթ:

Սօցիալիստ Միլրանը հանդէս եկաւ մի կրակոտ ճառով ի պաշտպանութիւն բանտային քահանաների ինստիտուտի պահպանութեան:

Երկրորդ նիստում Ժօրէսը խօսեց ֆրանսիացի սօցիալիստների յաղթանակի մասին երկաթուղային ծառայողների հարցի մէջ:

ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

13 ապրիլի

Բեռլին.—Գերմանական և աւստրօ-ունգարական դեսպանները Բ. Դրանը բարեկամական առաջարկութիւններ արին յունական ապրանքների դէմ բացված բօյկօտի առիթով: Բ. Դուռը խոստացաւ ձեռք առնել միջոցներ վերջ դնելու բօյկօտին:

—

Կ. Պոլիս.—Հօդէյդայից վերադարձաւ Բ. Դրան լիազօր Սալիհ-բէյը, որ իտալական կօմիսարի հետ միասին քննեց թիւրք-իտալական միջադէպը: Կօմիսարների միջև տեղի ունեցան տարաձայնութիւններ: Ընդհանուր արձանագրութիւնը ստորագրված չէ:

Բ. Դուռը երկրորդ անգամ Ցետինիէին բողոքեց, որ Չերնոգօրիան աջակցում է ալբանացիներին, և միաժամանակ նորից դիմեց մեծ պետութիւններին, խնդրելով ազդել Չերնոգօրիայի վրա:

Բ. Դրան տեղեկութիւնների համաձայն, Նովօ-Բազարի սանջակի սահմաններում կենտրոնանում են աւստրիական զօրքեր: Միևնոյն ժամանակ սաստկանում է ալբանական շարժումը սանջակի կողմը, տարածվելով նաև Իփեկի, Դիակօվոյի և Դիբրի գաւառներում: Ցուզի հետ հաղորդակցութիւնը նորից կտրված է: Ալբանացիները, ընտելանալով արտիլերիայի հետ վարվելու եղանակին, զօրքերի դէմ գործ են դնում զանազան բերդերում ձեռք ձգած թնդանօթներ:

Տեղեկութիւններ ստացվեցին, որ Կրետէում յուզմունքներ են սկսվել: Լրագիրները զայրոյթով են խօսում Կանէայում մի մահմեդականի սպանելու մասին: Արտաքին դժուարութիւնների կուտակումով բացատրվում է կառավարութեան ձգտումը՝ շուտով վերջ դնելու ներքին ճգնաժամին, որ առաջ եկաւ «Մ. և Ա.» կօմիտէտի երկպառակութիւնից, որի պատճառով այլադաւաններին կողմնակից մինիստրները սկսում են հաշտութեամբ գործել:

Մահմուդ-Փաշայի պահանջների պատճառով—որ ներկայումս հանդիսանում է իբրև անօրինողը—ճգնաժամի անմիջական վտանգն անցաւ:

Պալատում արտաքին գործերի մինիստրը և վէզիրը յարձակումներին յոյս յայտնեցին, թէ յարաբերութիւնները Չերնոգօրիայի հետ շուտով նորմալ բնաւորութիւն կընդունեն, և ասացին, որ Բօլգարիայի հետ հաստատվել են լաւագոյն յարաբերութիւններ, կրետական հարցը վտանգ չէ սպառնում, մեծ պետութիւնների հետ յարաբերութիւնները գերազանց են: Պալատը վստահութիւն յայտնեց մինիստրութեանը 122 ձայնով ընդդէմ 45-ի:

Հաղորդում են, որ սկիւտարցի ալբանները երկար կռիւ են ունեցել զօրքերի հետ Մուխտէպի մօտերը: Զօրքերը ութ թնդանօթներով ստիպել են ալբանացիներին յետ նահանջել:

—

Թեհրան.—Մէջլիսում շահնշահի բանկից փոխառութիւն կնքելու հարցի քննութեան ժամանակ առարկութիւն եղաւ այն մտքով, որ հարկաւոր չէ վճարել զօրքերի և պաշտօնեաների անցեալ տարիների ռոճիկները, որոնք կարող են ստացվել սովորական եկամուտներից: Փոխառութեան հարցը ընդունվեց սկզբունքով: Ծախքերի նախահաշիւը վերադարձվեց մասնաժողովին վերամշակելու համար:

—

Թաւրիզ.—Կանոնաւոր սարբազների և ժանդարմների միջև տեղի ունեցան մի քանի ընդհարումներ՝ Թաւրիզից Ատրպատականի զօրքերի հրամանատար Աման-Ղուլի-Միրզային հեռացնելու նպատակով:

Այն տեղեկութիւնը, որ Թիւրքաց կառավարութիւնը Քերբալայում և Նէջեֆում յարքունիս է գրաւելու շիա ուխտաւորների և Նասր-Էդդին շահի նուիրած թանգագին ակնեղէնը, տեղիս մամուլին առիթ տուեց տպել վշտալի յօդուածներ:

—

Ուրմիա.—Ռուսական ապրանքների բօյկօտը շարունակվում է:

Ռուսական հիւպատոսարանում բաստ նստեցին 15 սարբազներ, փախչելով ստորին աստիճանի օֆիցերների հալածանքից:

Սուլդուզում վերջնականապէս մտցվեցին թիւրքական օրէնքներ հարկերի մասին:

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

—

Կ. Պոլիս, 1/14 ապրիլ

Դառն վիճակի մը մատնուած է այս միջոցիս Թիւրքիա: Ամէն անոնք, որ նոր ռէժիմին վրայ մեծ յուսադրութիւններ ունէին, կատարեալ յուսախաբութեան մատնուեցան: Եւրոպեան դիւանագիտութեան պատկառելի ներկայացուցիչները, որոնք յանկերգ ըրած են իրենց ճառերուն մէջ վստահութիւն յայտնել Թիւրքիոյ մէջ հաստատեալ նոր ռէժիմին վրայ, երեք տարուան տխուր փորձառութենէ մը յետոյ արդէօք տակաւին նոյն քաղցր ինքնախաբութեամբ թէ՛ իրենց անձը և թէ իրենց շուրջինները պիտի խաբեն, պիտի խաբուին:

Կատարեալ ձախողուած մը եղաւ նաև այս երկրի մէջ սահմանադրութիւնը, որ կրկին փորձուեցաւ 1908-ին, վերահաս վտանգի մը իբր պատուար, ինչպէս 32 տարի առաջ նման պայմաններու մէջ արդէն մէկ անգամ փորձուած էր և ոևէ օգուտ ցոյց չէր տուած։

Հիմա ալ սահմանադրութիւնը նաև կատակերգութեան մը վերածուած է։ Ազատութիւնը անուանական է, և երկրին մէջ հաստատուն ոչինչ կայ։ Մէկ օրէ միւսը՝ խոշոր անակնկալներու առջև կրնանք գտնել ինքզինքնիս, որոնք կրնան շրջել երկրին դրութիւնը։

Թիւրքերը այնպէս կարծեցին, թէ երկիր մը սահմանադրական ընելու համար անոր սահմանադրութիւն մը տալ բաւական է, մինչդեռ ամեն բանէ առաջ պէտք է ժողովուրդը պատրաստել այն կեանքին և տալ անոր այն անհրաժեշտ ծանօթութիւնները, զորս պէտք է որ ունենայ ամեն սահմանադրական քաղաքացի, երկրին մէջ մարմին տալու համար կառավարութեան մը, որ ժողովուրդին կամքէն կը բղխի, և ոչ թէ մասնաւոր խումբերու։

Թիւրքիոյ մէջ նոր բէժիմը հիմնուած է ոչ թէ ժողովուրդին ազատ կամքին վրայ, այլ «Մ. և Ց.» գաղտնի կոմիտէին, որուն անդամներուն թիւը Թիւրքիոյ մէջ 1908-էն առաջ շատ սակաւաթիւ էր և 1908-էն յետոյ այնքան բազմացաւ՝ ոչ թէ գաղափարակից ու համամիտ, այլ շահու, դիրքի պահպանութեան և երկիւղի վրայ սողոսկող մարդոց հոյլերով։

Եւ անոնք, որ կրցան այս սողոսկողի դիրքը ստանձնել, տեսնուեցաւ որ ինքզինքնին կրցան փրկել։ Հիւսէյն, Հիլմի, Հաքքը և ուրիշ կարգ մը փաշաներ, հակառակ իրենց վաղեմի հաւատարմական ծառայութեանց, «Մ. և Ց.» կոմիտէէն պաշտպանուեցան, վասն զի ճարտարութիւնը ունեցած էին՝ տիրող ուժգին հոսանքին զօրութիւնը լաւ չափել։

Այսօր Թիւրքիոյ մէջ ժողովրդային կամքին արտայայտութեան տեղ՝ երբեմն դաւադիր կոմիտէի մը և անոր զօրութեան առջև խոնարհող կարգ մը շահախնդիր, կամ իրենց յուռի անցեալը մոռցնել տալու ջանադիր անձերու կամքն է, որ կը տիրապետէ։ Եւ որովհետև միշտ կողոպուտը ու շահագործութիւնը բաներ են, որոնք կարթնցնեն ուրիշներու ալ ախորժակը, մանաւանդ Թիւրքիոյ մէջ, ուր պաշտօն ու դիրք միակ նպատակակէտը եղած են ապրող ժողովուրդին համար, ուստի և այսօր «Մ. և Ց.» կուսակցութիւնը կը շահագործէ երկիրը, իր և իր կուսակիցներուն մէջ բաժնելով ամեն պաշտօն. և անոնք, որ այսօր այդ կուսակցութեան իբր ընդդիմադիր կը ներկայանան, անոնք ալ իրենց կարգին չեն արտայայտութիւնը ժողովրդային տարբեր հոսանքներու, այլ անոնք են, որ այս ընդհանուր կողոպուտէն կամ շահագործութենէն բաժին չեն ստացած։

Այս կողոպտելու, իրենց անձնական քսակը պարարտացնելու միտումով իրարու դէմ պայքարող մարդիկը, որ իբր թէ կը ներկայացնեն երկրին կուսակցութիւնները, աւելի կը վարկաբեկեն այս երկրին մէջ սահմանադրութեան գաղափարը, որ արդէն ժողովուրդին մէջ վարկաբեկ եղած է, վասն զի երբեք ոևէ շօշափելի բարօրութիւն չկայ ժողովուրդը համոզող, թէ իրապէս երկրին մէջ մեծ յեղաշրջութիւն մը պատահած է։

Անարդարութիւնը կը թագաւորէ, աւազակութիւնները կը տևեն, և սահմանադրական կառավարութիւն մը, որ օրէնքներու կրթնած ըլլալուն այնքան հպարտ է, երեք տարուան անընդհատ մաքառումներով չկըրցաւ ձերբակալել երկրին ամենէն զարգացած և հաղորդակցութեան միջոցներով այնքան առատ կուսակալութեան—Զմիւռնիոյ—մէջ գործող Չակըրջալըի խումբը, որ քանի մը տասնեակ անձերէն աւելի չէ ապահովաբար։ Այլևս ճանբաներէ և երկաթուղիներէ զուրկ նահանգներու մէջ գործուած աւազակութիւնները չափել ձեզի կը թողում։ Էշկիաֆները—գաւառներու մեծամեծները—դարձեալ կը կողոպտեն խեղճ գիւղացին։ Նախկին կողոպտող, կաշառակեր, հարստահարիչ պաշտօնեաները իրենց պաշտօնին վրայ են և աւելի կառաջադիմեն։

Համբաւաւոր Նազըմ փաշա մը Այդընի պէս տեղւոյ մը կուսակալ կը կարգուի, և ասիկա կը բաւէ գաղափար մը տալու, թէ հին ըսուած դատապարտեալ բէժիմն ու անոր յաջորդող գովաբանուած նորը ի՛նչ տարբերութիւններ կը ներկայացնեն իրարմէ։

Գալով քաղաքացիական ազատութեան, ասիկա ալ շատ խաբուսիկ երևոյթ ունի։ Գաւառներու մէջ ոստիկաններու և ոստիկան զօրաց կողմէ յանկարծական ձերբակալութիւններ, ծեծ ու բանտ դեռ սովորական իրողութիւններ են։ Մայրաքաղաքին մէջ տևականացած պատերազմական վիճակը արդէն կը կաշկանդէ կարգ մը իրաւունքներ։ Իսկ մամուլի ազատութիւնը խօսքով գոյութիւն ունի, բայց իրականութեան մէջ ոչ։ «Մ. և Ց.» կուսակցութեան թերթերը ամեն բան գրելու ազատ են, բայց իրենց հակառակորդները՝ ոչ։ Նախաքննութիւնը վերջացած, սակայն հրատարակուելէն յետոյ իւրաքանչիւր թերթ տեսակ մը հաւատաքննութեան ենթարկուած է թէ ընդհ. դատախազէն և թէ պատերազմական ատեանէն, որ միշտ թերթերը կը խափանէ, երբ «Մ. և Ց.» կուսակցութեան տակտիկը քննադատուած տեսնէ։

Այնպէս որ՝ լուրջ ընդդիմադրութիւն մը կամ ոևէ քննադատութիւն մը ներկայացնել՝ առանց թերթը խափանման ենթարկելու վտանգը աչք առնելու՝ կարելի չէ։

Հետևաբար, երկրին մէջ Համիդի բռնակալ կամքին յաջորդած է ոչ նուազ ճնշող ուրիշ կամք մը, կուսակցութեան մը կամքը, որ ոչ նուազ արիւնռուշտ նկարագրով մը օժտուած է։

Ասոր համար է, որ թերևս հետզհետէ նուազ ժողովրդական կը դառնայ այս կուսակցութիւնը, որուն դիրքն զգալապէս խախտած է երեք տարուան միջոցին մէջ։ Իր ազգայնական ուղղութիւնը իր գլխաւոր սխալը եղաւ։ Այդ մասին յաջորդ անգամ։

Շաւայ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Էնզէլի, 2 ապրիլի

Քարգարիի շրջանը, որ գտնվում է Էնզէլիի և Աստարայի մէջտեղ, այժմ ապստամբութեան մէջ է։ Այդ շրջանի ժողովուրդը, որ միապետութեան ժամանակ իրան յայտարարեց յեղափոխական և տեղական դատաւոր Ամիդ-ուս-Սալթանէ սարդար-Ամջադին դուրս վռնտելով այնտեղից՝ կողոպտեց նրա ամբողջ հարստութիւնը, տուն տեղ քանդեց և կալուածներն էլ սեփականացնելով՝ մինչև այժմ էլ շահագործում է, առանց նոյնիսկ կառավարական հարկը տալու, ներկայումս էլ ըմբոստացել է նոր կառավարութեան դէմ։

Նոր կառավարութեան ուղարկած դատաւորը, երբ այս նորերս սկսել է գանձել թէ նոր և թէ հին հարկերը տեղական ժողովրդից, դրանից առաջացել է անհամաձայնութիւն և վերջն էլ կռիւ։

Որպէս տեղեկանում ենք, երկու կողմից սպանվել են մօտ 20—30 մարդ և դատաւորն էլ շրջապատվել է տեղացիներից։

Այսօր դատաւորին օգնական զօրք է գնում մօտ 200 հոգի պարսից կօզակ, որն հէնց այդ առիթով Թէհրանից է ճանապարհվել։

Ինչպէս պատմում են, Քարգարիի շրջանի ժողովրդի թէ զինված լինելու և թէ յամառ բնաւորութեան պատճառով, այս կռիւը թէ շատ երկար կը քաշի և թէ արիւնահեղ կը լինի։

Տարօրինակ բարքերի տէր և մէկը միւսին հակասող բնաւորութիւն ունեցող ժողովուրդ ունի Պարսկաստանը։ Մի ժամանակ կռւում էին հին բռնապետական կարգերի դէմ, այժմ կռւում են նորը հնի վերածելու կամ աւելի ճիշդ՝ կռւում են առանց իմանալու, թէ ինչ է իրանց իսկական, վճռական պահանջը կամ ո՛ր կարգերն են իրանց ընդհանուրին ձեռնտու։

Մի քանի բաղդախնդիր և պատահական մարդիկ կարողանում են այստեղ իրանց շուրջը հաւաքել տգէտ մասսային և երէկվայ շինածը այսօր քանդել, էգուցվանը միւս օրն, և այսպէս շարունակաբար, որով երկիրը միշտ մնում է խառնակ դրութեան մէջ. և մինչդեռ մի կողմնը, մի շրջանինն հանգստացվում է, դուրս է գալիս մի նորը այլ շրջանում։

Իսկ այս անարխիային վերջ տալու համար քաղաքագէտ մարդիկ են հարկաւոր, որից զուրկ է Պարսկաստանը ներկայումս կամ եթէ կան էլ մի քանի հոգի՝ քաղաքացիական քաջութիւն չունեն նրանք ասպարէզ դուրս գալու։

Մուշահիդ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

Ծխական ժողովի որոշումը

Դզլար (Թերէկի շրջ.), 4 ապրիլի

Ամսիս 3-ին, կիրակի, երեկոյեան ժամը 7-ին, տեղիս հայոց ծխական-արական դըպրոցի դահլիճում, քաղաքիս եկեղեցիների ծխականները հրաւիրված էին երրորդ անգամ ընդհանուր ծխական ժողովի։ Օրակարգի հարցերն էին՝ 1) չորս եկեղեցիների հաշուետւութիւնը, 2) չորս նոր երէցփոխների ընտրութիւնը և 3) դպիր Մ. Թումանեանին իբր նպաստ տրվող 240 ր. գումարը, որը այժմ մնում է անգործադրելի, ինչ անել։ Նախ քան ժողովի բանալը, հոգևոր կառավարութեան անդամ Վահան քահ. Թաւարբէգեանը ծանօթացրեց ժողովականներին օրակարգի հարցերի հետ. առաջին երկու հարցը ժողովը քննութեան նիւթ չը դարձրեց, քանի որ երէցփոխներ Ռ. Քալանթարեան և Գ. Անանեան եկեղեցական հաշիւները չէին բերել, պատճառաբանելով որ հոգևոր կառավարութիւնը յայտարարութեան մէջ չէ յիշատակել, թէ եկեղեցիների հաշուետւութիւնը էլ լինելու է. միայն գրված է երէցփոխական ընտրութեան մասին։ Այնուհետև ձայների ճնշող մեծամասնութեամբ ընտրեցին նախագահ՝ Վահան քահ. Թաւարբէգեանին, իսկ քարտուղար՝ Ա. Բաբայեանին ու անցան օրակարգի երրորդ հարցին։ Ձայների մեծամասնութեամբ սկզբունքային տեսակէտից որոշեցին՝ այսուհետև էլ նման անցեալ տարիների, յատկացնել եկեղեցական եկամուտներից վերոյիշեալ 240 ր., որը մինչև 1910/11 ուսումնական տարին տրվում էր նպաստ միջնակարգ դպրոցում սովորող սաներին։ Դրանից յետոյ գումարը ումը յատկացնելու մասին կայացաւ հետևեալ որոշումը։ Ի նկատի առնելով որ ծխական հոգաբարձութիւնը արդէն դպրոցի սաներից Գալուստ Ջերքէզեանին, իբր դպրոցի կուրսը առաջադէմ աւարտողներից մէկի, ուղարկել է Դերբէնդի գիւղատնտեսական դպրոցը շարունակելու, յատկացնել այդ գումարը նրան մինչև դպրոցական դասընթացքի աւարտումը։ Օրակարգի մնացած հարցերի համար որոշվեց հրաւիրել նոր ժողով ներկայ ապրիլի 12-ին, որից յետոյ ժողովը փակվեց ժամը 11-ին։

Նորեկ

Սովի սպառնալիքը

Ջէբրայիլ (Կարեագ. գաւ.), 5 ապրիլի

Ձմեռը թէև անցաւ, բայց նրա թողած սարսափը դեռ շատ ժամանակ թարմ կը մնայ գիւղացիների յիշողութեան մէջ, որովհետև ձմրան հասցրած վնասները գիւղացիներին դրել է անելանելի դրութեան մէջ։ Ամենաստուգված տեղեկութիւնների հիման վրայ կարող ենք ասել, որ գիւղացիք մեր գաւառում զրկվել են տնային մեծ անասունների $^2/_3$ մասից, իսկ մանր անասուններից մնացել է մի չնչին քանակ, այն էլ հիւանդ դրութեան մէջ։ Բացի այս՝ գիւղացիք ստիպված եղան կերակրվել ու կերակրել իրանց անասուններին սերմացուի պաշարով։ Ահա և այս պատճառներով գիւղացիք մի կողմից զրկվեցին լծկան ապրանքից, իսկ միւս կողմից՝ սերմի պաշարից։

Գիւղացիներին օգնելու համար հարկաւոր է անմիջական ուշադրութիւն թէ կառավարութեան կողմից և թէ հասարակական գործիչների կողմից, որովհետև հակառակ դէպքում նրանք մատնված կը լինեն սովի, որի մուտքը մեր գաւառը անխուսափելի է և որի համար մի կողմից էլ յարմարութիւն կը ստեղծէ այն հանգամանքը, որ գիւղացիք, լծկանների պակասութեան պատճառով, զուրկ պէտք է մնան գարնանացանից։ Արաքսի հովտում, բացի այս ամենը, գիւղացիք կը կրեն վնասներ մորեխից, որը այս տարի շատ է սպասվում, քան անցեալում է եղել։

Եթէ երկաթուղու գիծը անցած լինէր Եւլախից Շուշի և այնտեղից էլ Կարեագին գաւառով Արաքսի ափով Ջուլֆա, հացահատիկների ներմուծումը Ռուսաստանից կը կատարվէր շատ էժան գներով։ Միմիայն Եւլախից մինչև Ջէբրայիլ պուդին քրէհ է բռնում 60—70 կոպէկ, մինչդեռ Եկատերինօդարից մինչև Եւլախ՝ 15—20 կոպ., չը նայած որ Եւլախից մինչև Ջէբրայիլ ունի 150 վերստ տարածութիւն, իսկ Եկատերինօդարից մինչև Եւլախ մօտաւորապէս 1200 վերստ տարածութիւն։ Այժմս ալիւրի պուդը Եկատերինօդարից և Խարկովից Ջէբրայիլում նստում է 2 ր., իսկ եթէ երկաթուղի անցկացված լինի, կը նստի 1 ր. 20 կ., իսկ ամենաթանգը՝ 1 ր. 40 կ.—1 ր. 50 կ.։

Եթէ երկաթուղու գիծը այս ուղղութեամբ անցնի, այն ժամանակ Ջիւանշիր, Ջէվադ, Կարեագին և Զանգեզուր գաւառները ապահովված կը լինէին հացի կողմից։ Իսկ պարզ է, որ առևտրական ու լուսաւորութեան տեսակէտից այդ ճանապարհը կունենայ մեծ կուլտուրական նշանակութիւն։

Ղարաբաղի կուլտուրապէս ընկած հայերը միմիայն այս գծով կարող են աչքաբաց լինել, որովհետև նրանք կտրված են կուլտուրայի կենտրոններից, ճանապարհների պատճառով։

Ավ. Տէր-Յարութիւնեան

ՏԵՂԵԿԱՏՈՒ ԶԱՆԳԵԶՈՒՐԻ

II

Գաւառիս բնակչութիւնը իր յոյսը դրել էր ապրիլի վրայ, սակայն ապրիլն էլ եկաւ, բայց երկինքը դեռ մթնած է նրա գլխին։ Երկու օր միայն արևի երես տեսանք. և որքան մեծ ուրախութիւն պատճառեց այդ երկու օրը անասնատէրերին։ Նրանք փառք էին տալիս Աստուծուն և լաւ եղանակ խնդրում, և ահա դարձեալ մառախուղ, համատարած մշուշ, անձրև, ձիւն. և ամեն սիրտ սևով պատվեց։ Խոտ և դարման գտնվում է Սիսիանում միայն, որտեղից գնում են բեռներով և զօրեսցիք, և տեղեցիք, և խնձորեսկցիք և բոլոր գիւղերը։ Շուկայում դարմանի բեռը ծախվում է 4—5 րուբլով. խոտի 10 խուրձը (տեղական փունջերը) 4—6 րուբլի, այն էլ դժուարութեամբ է գտնվում։

Մօտ օրերս գնացի Խնձորեսկ գիւղը. գիւղից դուրս, ձիւները հալած արտերում, անցեալ տարվանից մնացած ծղօտները տղամարդ, կին, երեխայ թափված հաւաքում էին, բեռներով գիւղ բերում. իսկ երբ գիւղ հասանք, մի քանի տեղ կալերում այդ հաւաքած ծղօտները կալսում և դարման էին պատրաստում։

Խոսեցնել և կամ բարի օր տալ անգամ մարդ չէ համարձակվում նրանց, որոնք իրանց ամբողջ տարին ցեխում, արևում և անձրևում անցնող երկրագործական դառն և անմխիթար ճակատագրի հարուածներն են տանում ներկայումս։

— Բա քեզ հինչ ա ըլալ, ա միան Տէր, մեն աչըլմէշ ըլ, երկիր ըշխարքի օր ու դուլիդ տուր, կլներիս քանի մըն մթնեց. բա բօլ չի՞,—իրանք իրանց դժգոհում և տրտնջում են նրանք։

Նման տարիներ շատ սակաւ են եղել այսպէս ամբողջ գաւառը ծանր պայմանների տակ դնող. անցեալներում եթէ հայերն են պակաս կեր ունեցել, թուրքերն են օգնել, և ընդհակառակը. իսկ այժմ այդ պակասը համատարած է. թէ հայ և թէ թուրք՝ նոյն նեղ և անտանելի պայմանների մէջ են գտնվում։

Ոչխարների, գառների կոտորվելուն չափ ու սահման չը կայ. մի շարք գիւղերում կովեր և եզներ էլ շատ են փչացել։ Ակամատես եղայ երկու քաղցած եզան չարչարանքով ճանապարհ գնալուն. թէ նրանք ինչպէս մի քանի քայլ գնում էին և ապա ցեխում չոքում, տիրոջ ճիպոտի հարուածից նորից ոտքի ելնում և կրկին չոք-չոքելով առաջ գնում. այդ մի շատ տխուր տեսարան էր։

Խոտ ու դարմանի պակասութեան պատճառով եզների և կովերի գինը այնքան մեծ չէ, սակայն եղանակները բացվելուն պէս առասպելական գների կը հասնեն լծկան եզները։

Բնութիւնը սև քնած է. մինչ օրս ծառերը դեռ սև ծաղիկ չեն հանել. այգիներ, բանջարանոցներ թողնված են երեսի վրայ։

Ուշացող գարունը միշտ էլ լաւ ապագայ է ունեցել մեզանում, եթէ անասունների կերը պակաս չը լինի։

Եւ այսպէս՝ գաւառս կարօտ է կենսաբեր գարնան, որը այսքան ուշացաւ և իր բուք ու բորանով և ձիւնի առատութեամբ գիւղացիութեանը կորստեան դուռը մատնեց։

Սադանդարեան

ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ *)

Բագու, 31 մարտի

Երկար ժամանակ մղվող պայքարը, վերջապէս, երէկ, մարտի 31-ին, պսակեց քաղաքային վարչութեան շէնքում։

Դեռ մի քանի օր առաջ առանձին թերթով հրապարակ էին հանված մի շարք թեկնածուների անուններ, թւով 204 քաղաքացիների, որոնցից պիտի ընտրվէին 80 ձայնաւորներ և 16 թեկնածուներ։

Յիշեալ 204 քաղաքացիների մէջ 51-ը հայի անուններ էին, 41-ը ռուս և ռուս-աղանդաւորների, իսկ մնացեալը թուրքերի։

Առաւօտեան ժամը 9-ից Նիկօլաևսկի փողոցում, ուր գտնվում է քաղաքային տունը, առանձին, չը տեսնված շարժում էր նկատվում. քաղաքացիները խումբ-խումբ դիմում էին դէպի ընտրութեան վայրը. կառքերը, աւտօմոբիլները իրանց սուլոցներով և դղրդիւնով ողողում էին մարդկանց։

Քաղաքային տան առաջ երթևեկութիւնը համարեա թէ կանգ առաւ. մարդկային ծով էր ներկայացնում փողոցը։ Ամբողջ ոստիկանութիւնը, բոլոր քաղաքամասերից, հեծեալ թէ հետևակ, ոտքի էր հանված։ Օտար քաղաքացին կը կարծէր, թէ ինչ-որ ցոյց է սպասվում։ Սակայն մեզ համար ոստիկանութեան այդ ուժեղ կազմի պատճառները պարզ էին։

Պէտք է ասած, որ Բագւում ինչպէս շատ հասարակական գործեր, նոյնպէս և քաղաքային վարչութեան մէջ, կատարվում են յօգուտ այս կամ այն կուսակցութեան. Քաղաքը, որ գտնվում է թուրքերի ձեռքին, շնորհիւ հայերի և այլ քրիստոնեաների անփութութեան, բաժանված է երեք կուսակցութեան. մէկի գլուխն է անցած Հ. Զ. Ա. Թաղիևը, որ ամենահզօրն է, երկրորդինը՝ Սաֆարալիեվ Իսմայիլ-բէկը, իսկ երրորդինը՝ Հաջիեվ Իսրաֆիլը։

Այդ երեք հսկայ քաղաքացիք յայտնի են իրանց լաւ և վատ արարքներով, արարքներով թէ անցեալում և թէ ներկայումս. ուստի դրանց շահերը այնպէս են դասաւորված, որ երբեք հաշտվել չեն կարող։ Բայց, ինչպէս ասացի, այդ երեքի շահերը և կենցաղը սերտել են միմեանց շատ դէպքերում հայ-քրիստոնեայի շահի տեսակէտից խօսել, որպէսզի այս կամ այն կերպ դիմակի տակ իրանց եսը առաջ տանեն։

Նովիկովի հեռանալուց յետոյ թուրք ազգաբնակութիւնը այնքան վատ տարաւ ինքնավարութեան գործերը, քրիստոնեաներին այնքան ճնշեց, նեղեց քաղ. գործերի մէջ, որ, վերջապէս, 7—8 տարուց յետոյ քրիստոնեայ ազգաբնակչութիւնը ոտքի կանգնեց, սկսեց թաղային ժողովներ գումարել. ռուս, հայ, վրացի՝ մի սիրտ մի հոգի դառած՝ 3—4 ամիս 10—15 ժողովներ ունեցան ցեխից հանելու իրանց ոտնատակ ընկած շահերը, քաղաքացիական իրաւունքները։ Այդ բոլորը թուրքերը տեսնում էին. «Каспій»-ը, թուրքերի բերանը, ոչ մի միջոցի առաջ չէր կանգնում քրիստոնեաների «ըմբոստութիւնը» սաղմի մէջ խեղդելու։ Եւ թուրքերը աւելի նեղը կը լծէին հայերին և քրիստոնեայ քաղաքացիներին, եթէ մի ամիս առաջ, այսինքն մղվող նախապատրաստական պայքարի ամենաթէժ ժամանակը չը ծագէր մի Մատանու չարաբաստիկ հարցը, որը ահագին դղրդոց առաջացրեց ինչպէս քաղաքացիների, նոյնպէս և կառավարչական շրջաններում։

Թող ընթերցողը չը ձանձրանայ մեր անհամ պատմութիւնից. ես մանրամասն եմ նկարագրում, որպէսզի ընթերցողը որոշ գաղափար կարողանայ կազմել այդ հսկայ քաղաքի գործերի և նրա միլիոնատէր ղեկավարների մասին։

Մատանու հարցը հետևեալ կերպով էր պատմվում այստեղ։

Քաղաքային ձայնաւորներից մէկը, Հաջիեվ Իսրաֆիլը, որը երեք պարտիաներից մէկի պարագլուխն է, հանգուցեալ Թ. Գեօզալեանից և Խօջաբաղիեվից մի մատանի է ընդունում «նուէր», որը գնվում է 500 ր. Մանդասարեանի վաճառատնից։ Բայց դրամի կէսը ապառիկ է մնում. պարտատէրը իրան պարտապան չէ ճանաչում, ասում է, որ ինքը մատանի չէ գնել, իր հանգուցեալ ընկերի պարտքն է և այլն։ Ահա այդտեղ էլ բացվում է, որ մատանին տուել են քաղ. ձայնաւորի։ Դա բաւական էր, որ այդ խնդիրը հասնէր քաղաքապետ Մարտինովի ականջին։ Մարտինովը բռնեց գործին մօտիկ մարդկանց խախտն՝ հրապարակ հանելու անյայտ ձայնաւորի անունը։ Կրակի վրա իւղ ածեցին հակառակ կուսակցութեան ձայնաւորները, յայտնելով, որ «նուէր» ստացել է Հաջիեվ Իսրաֆիլ հեղինակաւոր ձայնաւորը։

Այդ միջադէպի ժամանակ քրիստոնեաների վերջին թաղական ժողովների վերջաբանն էր։ Հաջիեվը ուրիշ ելք չը գտնելով վերընտրվելու, իր ագենտներին ուղարկեց քրիստոնեաների ժողովներին, որոնք ճաճուն ճառերով սկսեցին պախարակել իրանց թուրքերին, որ քաղաքը թալանում են, «Շամախու ճանապարհ» կոչված քաղաքամասը անտէր է (պիտի ասած, որ Հաջիեվի կուսակցութեան մեծամասնութիւնը այդ թաղամասումն է տեղաւորված), որ այդ թաղի թուրքերը ևս ցանկանում են հայերի հետ ձեռք-ձեռքի տուած գործել, եղբայրներ են և այլն։ Հայերը ձեռք պարզեցին թուրքերին «եղբայրանալու»։

Դրանք իրանց ընտրեալների ցուցակը կազմեցին, առանձին թերթիկներով հրատարակեցին և սկսեցին բաժանել։

Դրանց միացաւ և Սաֆարալիեվը իր պարտիայով, երբ տեսաւ, որ «իր մարդիկ» ոտքի տակ պիտի գնան։ Այնուհետև հայերը քաղցր, հայկական քուն մտան, երազելով, որ եղբայրացել են, իրանք թուրքերին պիտի ձայն տան, թուրքերն էլ իրանց, և քաղ. ժողովներում 40 թուրք, 30 հայ և 10 ռուսներ պիտի ձայնաւոր լինեն։

Եկաւ ընտրութեան օրը. երեկոյեան թուրքերի մէջ, գլխաւորապէս Թաղիևի խմբում, թունդ պրօպագանդա էր մղվում ի վնաս միւս երկու պարտիաների, իսկ հայեր ընտրելու մասին խօսք անգամ չէր լինում, որովհետև որոշված էր չընտրել հայ։ Երկու կուսակցութիւնն էլ միացած և թիկունք ունենալով քրիստոնեաներին, ընդդէմ էին խօսում Թաղիեվի խմբին։ Հայերը—քրիստոնեաները—յաղթութիւնը տարած էին համարում, մտածելով որ թուրքերի մի մասից էլ սպիտակ քուէ կը ստանան, հայերից էլ, ուստի ձեռքները մէջքներին սեղմած, պապիրօսը բերաններին սպասում էին քուէարկութեան մեծ շանսին։

Վերջապէս, ժամը 11-ին քաղաքագլուխ Ռաևսկին բարձրացաւ ամբիոն։

Նա յայտնեց, որ նախ քան ժողովը բանալը և գործի անցնելը քաղաքապետ Մարտինովը ուզում է մի քանի խօսք ասել ընտրութիւնների առիթով։

«Պարոններ,—ասաց քաղաքապետը—դուք այսօր հաւաքվել էք այստեղ ձեր քաղաքացիական պարտքը կատարելու։ Այսօր անփոխարինելի օր է մեր քաղաքի համար։ Դուք եկել էք քաղաքի համար ձայնաւորներ ընտրելու և քաղաքի խնդիրը յանձնելու ձեր ընտրած ձայնաւոր-ներկայացուցիչներին չորս տարի շարունակ։ Դէն գցէք ձեզանից զանազան կուսակցութիւնները, ընտրեցէք արժանաւոր ձայնաւորներ, որոնք մաքուր լինեն գործի մէջ։

«Ես հաւատում եմ,—շարունակեց քաղաքապետը—պարոններ, որ դուք էլ այդպէս կը վարվէք։ (Դահլիճի մէջ լսվեց ծափահարութիւն, շարժում, ապա և «ուռա» բացագանչութիւն)։

«Պարոններ, այստեղ նախագահող քաղաքագլխին դուք պարտաւոր էք լսել, նրա բոլոր կարգադրութիւններին հնազանդվել և առանց յեղաշրջման վճռել օրվայ խնդիրը, իսկ մտքերի փոխանակութիւնը պիտի կատարած լինէիք առաջ։ Աստուած ձեզ հետ. տուեցէք ձեր քուէն ում կամենում էք»։

Քաղաքապետ Մարտինովը իր հակիրճ և բազմաբովանդակ ճառը աւարտեց ուռաների տակ։

Քաղաքապետի ճառը թուրքերէն թարգմանեց քաղ. վարչ. քարտուղար Վեզիրովը։

Ապա բարձրացաւ քաղաքագլուխը և յայտարարեց, որ այսօր պիտի ընտրել 4 տարվայ համար քաղաքի ձայնաւորներ, որից յետոյ սկսեց կարդալ և բացատրել ընտրութիւնների վերաբերեալ կանօնները, որը պարսկերէն թարգմանեց Վեզիրովը, իսկ հայերէն՝ Ստ. Թաղիանոսեանը։ Բայց որովհետև այսօր թեկնածուներից պիտի քուէարկվէին միմիայն 120, ի նկատի առնելով, որ արկղները այդքան են միայն, շարունակութիւնը կը լինի հետևեալ օրը։

Այնուհետև քաղաքագլուխը յայտնեց, որպէսզի ընտրողները ազդեցութիւնների չենթարկվեն, քուէատուփերի մօտ նշանակված են բոլորովին անշահասէր մարդիկ, որոնք պիտի յայտնեն տուփատիրոջ ազգանունը, որը գրված է արկղի վրա. ոչ մի խօսք չը պիտի լինի քուէն տալու ժամանակ։ «Ընտրութիւնների ձեռնարկութիւնը ինձ է յանձնված և ես ինձ օգնելու համար օգնականներ եմ հրաւիրել պ. պ. Իսաբէկ Հաջինսկիին, Կ. Իբիցկիին, Մահմէդ Վէքիլովին, Ստեփան Թաղիանոսովին և վարչութեան անդամներին։ Իսկ քուէները ստուգելու համար առանձին յանձնաժողով է ընտրված, որի անդամները պատկանում են զանազան կուսակցութիւնների, 2-ական թուրքերից և 1 հայ ու 1 ռուս, որոնք խիստ հաւատալի անձնաւորութիւններ են»։

Ապա քաղաքագլուխը սկսեց կարդալ

---

*) Ներկայ յօդուածը, փօստային վարչութեան անփութութեան պատճառով, չափազանց ուշ ստացվեց, ուստի և տպագրվում է կրճատումներով։ Խմբ.

թեկնածուների ցուցակ-անունները, որի մասին սկզբում ասացի և որոնց թիւը 204 է։

Թեկնածուներից մի շարք հրաժարվել էին քուէարկվելուց (գլխաւորապէս հայերից, որոնք աւելի հեռատես էին), որոնց մէջ ի միջի այլոց Թաղիևը։ Վերջինիս հրաժարականը, արտաքուստ թէ ներքուստ, լաւ չը գիտեմ, խիստ ցաւ էր պատճառել քաղաքագլխին, ուստի, վշտալից ոգևորված շեշտերով, սոսկ Թաղիևի հրաժարվելու վրա, ասաց.«...Ինչպէս երևում է թեկնածուների թերթից (204 ընտրելիք թեկնածուների ցուցակից), ամենից շատ ձայն ստացել է Հաջի-Զէյնալ-Աբդիւլ Թաղիևը. ստացել է 540 ընտրելու ցանկութիւն. սակայն յարգելի Թաղիևը, դժբաղդաբար, յայտնել է Համամօվին, որ ինքը հրաժարվում է քուէարկվելուց...»։

Հէնց այդ էր բաւական... դահլիճի մէջ լսվեցին գոռում-գոչումներ, «просимъ», «просимъ» ասելով քաղաքագլխին նորից առաջ քաշեցին, որը յայտնեց՝ թէ «սուրհանդակ-ձայնաւոր» Համամօվին յանձնարարեց հէնց դումայի դահլիճից հեռախօսով յայտնել Հաջիին, որ «յուզված» հասարակութիւնը նրա ընտրվելը ցանկանում է։

Սուրհանդակ-ձայնաւոր Համամօվը գնում է հեռախօսի առաջ։

Քաղաքագլուխը մի այլ խաղ էլ առաջարկեց. նա յայտարարեց, որ կարդացված թեկնածուները, որոնք չեն ուզում քուէարկվել—ընտրվել, կարող են օրէնքով հրաժարվել։

Դրա պատասխանը, ի ցաւ քաղաքագլխի, կատարեալ լռութիւն եղաւ։

Ս. Գարագաշ

(Վերջը միւս անգամ)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Թիֆլիսում եղանակները վերջերս դարձան անձրևային։

◆ Կովկասեան ուսումնական շրջանի հոգաբարձուի գլխաւորութեամբ տեղի են ունենում առանձին խորհրդակցութիւններ այն մասին, թէ ինչ միջոցներով կարելի է կաթնատնտեսութեան գիտելիքները տարածել ազգաբնակութեան մէջ տարրական դպրոցի միջոցով։ Խորհրդակցութիւնները ղեկավարում է Ալ. Քալանթար։

◆ Կովկասի Փոխարքան մերժեց Քութայիսի մանր առևտրականների խնդիրքը՝ առևտուր անել կիրակի օրերը։ («Кв.»)

◆ Կովկասի Փոխարքան հնարաւոր գըտաւ բաւարարութիւն տալ Թիֆլիսի քաղաքային վարչութեան միջնորդութեան, որի համաձայն նորակառոյց Մուխրանեան կամուրջի վրա երթևեկող կառքերից և սայլերից քաղաքը տուրք է առնելու, ինչպէս այդպիսին գործադրվում է Վերայի կամուրջի վերաբերութեամբ։ Կամուրջի բացումը նշանակված է այս ամսվայ 24-ին։ Բացումից առաջ կը լինի հանդիսաւոր մաղթանք։

◆ Ուսուցչական Միութեան կենտ. վարչութիւնը դիմել էր Թիֆլիս-Կօջօր-Մանգլիսի պօստային ճանապարհի կառավարիչ Գ. Աբովեանին՝ Միութեան անդամների և նրանց ընտանիքների համար զիջումով տոմսակներ թողնելու։ Գ. Աբովեանը տուել է իր համաձայնութիւնը՝ որոշելով 50% զիջել։

◆ Ամսիս 16-ին Գօրում կայանալու է Գօրու շրջանի հայ ուսուցիչների ընդհանուր ժողովը, որը, ի թիւս այլ հարցերի, զբաղվելու է նաև Ուսուցչական Միութեան ճիւղ կազմակերպելու խնդրով։ Ուս. Միութ. կենտ. վարչութիւնը ուղարկելու է իր ներկայացուցիչը։

◆ Ժողովրդական Տանը, ապրիլի 17-ին, հայկական սեկցիայի թատերասէրների խումբը կը ներկայացնէ «Երկու որբ» մելոդրաման։

◆ Ապրիլի 8-ին և 9-ին ոստիկանական պաշտօնեաները քաղաքի զանազան մասերում կալանաւորեցին 8 պրօֆէսիօնալ գրպանահատների։

◆ Կիրակի, ամսիս 17-ին, կայանալու է Արտիստական Ընկերութեան ամառային շէնութեան այգում հետաքրքրական ծրագրով զբօսանք՝ յօգուտ Կովկասի Հայոց Բարեգ. Ընկերութեան։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը ստացել է Զատկական տօների առիթով, յօգուտ Ընկերութեան ձրի և էժանագին աշակերտական ճաշարանի՝ տիկ. Աննա Գէորգեանից 30 փունտ բրինձ։

◆ Ապրիլի 12-ին Հավլաբարի ս. Կարապետի դպրոցում տեղի ունեցաւ աշակերտական ցերեկոյթ։ Հրաւիրված էին աշակերտների ծնողները։ Աշակերտ-աշակերտուհիների արտասանած բանաստեղծութիւնները հայերէն և ռուսերէն՝ գիւղացիների և կենդանիների կեանքից վերցված առակները և խմբական երգերը հանդիսականների կողմից արժանացան բուռն ծափահարութիւնների։ Վերջում աշակերտներին բաժանվեց մրգեղէն։

◆ Թիֆլիսի նահ. դատարանի դատախազը քրէական պատժագրքի 1034-րդ յօդուածով մեղադրանք է սկսել ժուռնալիստ Լևան Կիպիանիի դէմ «ազատ սիրոյ լիգա» գործի առիթով։

◆ Շաբաթ օրը Թիֆլիսի հասարակական կլուբում Անդրէևը կը կարդայ ռեֆերատ ինքնասպանութեան մասին։ Վերջում կը լինի զրոյց։

◆ Հրդեհը Ղազախում ոչնչացրել է ոստիկանական վարչութիւնը։ Կրակում այրվել են բոլոր փաստաթղթերը։ Կասկածվում է հրկիզումն։

◆ Իգդիրից մեզ գրում են. «Ամբողջ Իգդիրը ապ. 3-ին հանդիսատես էր մի շատ ցաւալի, սրտաճմլիկ յուղարկաւորութեան։ Շատ տմարդի և ստոր ոճրագործութեան զոհ գնաց Երևանի ուսուցչական սեմինարիայի աշակերտ Վարդան Քօլոյեանը, որը իր զարմանալի աշխատասիրութեամբ հազիւ կարողացաւ անցեալ տարի ընդունվել։ Մարդ սոսկում է, երբ մտածում է, թէ որքան գազանանում է մարդը, որ խտրութիւն չէ դնում մեծ օրվայ, ծաղիկ հասակի մէջ։ Ոճրագործներից երեք Ղալաչեանները բռնված են, մէկը՝ իսկական շարժառիթը՝ փախել է»։

◆ Մօսկվայից մեզ գրում են. «Ապրիլի 1-ին կայացաւ Մօսկվայի Հայոց Ակումբում Ե. Բաղդասարեանի համերգը ի յիշատակ հոչ.որ երաժիշտ Մ. Եկմալեանի։ Համերգը, որը կազմված էր հետաքրքրական բաժիններից և որին մասնակցում էին նաև ռուս արտիստուհիներ, անցաւ շատ աջող. հասարակութեան դուր եկաւ մանաւանդ «Ցամբ երգը», «Վրաց օրօրոցի երգը» հեղ. Ե. Բաղդասարեանի։ Գաղութի տուզերը փայլում էին իրանց փառաւոր բացակայութեամբ. դէ, ի հարկէ, նրանց զարգացած քիմքերին հայ երգն ինչ բաւականութիւն կարող է պատճառել...»։

ՉՔԱՒՈՐՆԵՐԻ ՕԳՆԻՆ

Տօների առիթով ստացանք. 1) Սարատովից, Աւագ Հախվերդեանից՝ 3 ր., 2) Կոտելնիկովօ կայարանից, Յովհ. Մարտիրոսեանից՝ 1 ր. 50 կ.։ Ընդամենը տօների առիթով ստացել ենք 52 ր. 50 կ., որ և բաժանել ենք կարօտեալներին։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Առողջապահի» խմբագրութիւնից

«Աղբիւր»-«Տարազին» կից «Առողջապահի» պօրտֆէյլը սիրալիր ստանձնել է բժշկապետ Բ. Նաւասարդեան, իսկ բժիշկ Ա. Շիշեան թէև յայտարարված էր «Առողջապահի» 4-րդ համարում խմբագրութեանը կողմից իբրև փոխ-խմբագիր, չէ ստանձնելու այս պաշտօնը Թիֆլիսից ամառը բացակայելու պատճառով։ Աշխատակցութիւնը «Առողջապահին» կը շարունակէ ինչպէս մինչև այժմ։

Խմբ.-հրատ. Տ. Նազարեան

—

Զաքաթալա, 31 մարտի

Թոյլ տուէք Զաքաթալայի հայոց ծխական դպրոցի հոգաբարձութեանս «Մշակի» միջոցով շնորհակալութիւն յայտնել 1) Մկրտիչ Առաքելեան Քալանթարեանին և 2) Գրիգոր Խաչատրեան Աստվածեանին, որոնք ի նկատի առնելով դպրոցիս ընդարձակման կարիքն ու այդ կարիքի իրագործման համար հոգաբարձութեանս նիւթական սուղ միջոցները, չը զլացան նուիրաբերել յօգուտ դպրոցիս՝ առաջինը հարիւր րուբլի և երկրորդը՝ տասը րուբլի, և նոյնպէս Մուրացանի երկասիրութեանց հատորից 2 օրինակ, դպրոցիս «Իզմիրլեան» վերակոչված աղքատիկ գրադարանին։

Նախագահ հոգաբարձութեան՝
Աստ. Բէկ-Յովսէփեան
Քարտուղար՝ Արտ. Ստամբոլցեան

ՀԱՅ ԲԻՒՐՕԿՐԱՏԸ

—

Գաւառական ուսուցչուհի Սաթենիկ Զաքարեանի անպաճոյճ նամակը «Մշակի» № 60-ում շատ բան ասաց ու շատ բան պատմեց մեզ։ Սովորական ֆրազներ չէին, որ մուտք էին գործել այդ նամակում և ոչ էլ ճճռան բառեր։ Մի տարօրինակ ձևով է սկսվում այդ նամակը. հայ ուսուցչուհին առաջին նուագ անհամբերացել էր. նա պատմում էր, թէ ինչպէս տօնեցին իր չարքաշ գործունէութեան 25-ամեակը և թէ ով էր տօնող—դա հայ իշխանաւորը, հայ բիւրօկրատն էր իր նշանաւոր լակօնական ճառով. «Տիկին, մենք սկզբունքով ձեզ չենք կարող տեղ տալ. դուք 6—7 դաս. վկայական չունէք, թէև 25 տարվայ փորձառութիւն ունէք»։ Այս խօսքերով էր տօնվում բազմաչխատ մի կնոջ յօբելեանը, որ 25 ձիգ տարիներ տքնել և հիւծվել էր հայ մանուկի կրթութեան գործով, որը երկար տարիներ կուրծք էր մաշել, թոքեր փչացրել, իր սիրասուն զաւակներից զրկվել, իր կեանքը կաթիլ առ կաթիլ տուել, իր ընդունակութիւնները, սիրտն ու հոգին վատնել՝ թէ մի օր էլ երևի արևը մեր կողմը կը ծագէ, մեզ, մոռացվածներիս, ևս յիշող կը լինի... Եւ երբ նա յանդգնում է երազել, իր մտքին իսկ անցկացնել, թէ իմ 25-ամեակն էլ կը կատարեն, երևի ես էլ կարժանանամ մի «շնորհակալութեան և կեցցէի», ահա այդ պահին գալիս է հայ իշխանաւորը և իր հատու վճիռը տալիս. «Դուք անպէտք էք, դուք այլ ևս հայ դաստիարակների ընտանիքում մնալ անկարող էք... Այդ է պահանջում սկզբունքը»։

Չը գիտեմ, ընթերցող, ինչպէս արտայայտեմ այն բուռն ցասումը, այն սարսափելի ցաւը, որ համակել է իմ հոգին, այն խորը զզուանքը, որ ես զգում եմ այժմ։

Միթէ կարելի է այդ աստիճան տառապեալ ու մանրակրկիտ լինել, միթէ ապերախտութիւնն էլ չափ չունի, նահատակութեան համար սահման չը կայ։ 25 տարի տքնիր, քայքայիր առողջութիւնդ, նահատակի պէս ամեն հարուած, զրպարտութիւն, բամբասանք, զրկանք կրիր և ի լրումն այդ ամենի նայիր՝ ողջ-ողջ քեզ փողոց նետեն իբրև անպէտք ապրանք։ Հեռացնել այն յարկի տակից, որտեղ դու 25 տարի շնչել ես, զգացել, քո արցունքը խեղդել, քո ուրախութիւնը մեռցրել. դուրս վանել այն օջախից, որի կիրն ու հողը քո նեարդերի հիւթով են շաղախված, որի իւրաքանչիւր աղիւսը քո քամված արիւնով է կարմրած, որի պատերը քո արտասուքներով ու զրկանքի դառն զգացմունքներով են ցօղված, որի հիմքերի տակ քեզ նման տասնեակ հազարների ոսկորներ են փտում։

Դիւրին չէ, ընթերցող, այդքան տառապանքներից յետոյ՝ այս ևս կրել։

Ի զուր տեղը պ. Ռաշմաճեան այդքան խախուտ հողի վրա ոտք է կոխել, քանի որ եթէ «սկզբունքի» և օրէնքի տառի ետևից ընկնենք, թերևս շատերի հետ ինքը պարոնն էլ իր տեղում չը կարողանար մնալ։

Սակայն որքան և անկօնտրօլ ու անպատասխանատու լինեն նրանք, այնուամենայնիւ հասարակաց խղճի առաջ անպատասխանատու մնալ կարող չեն։ Առ-Զէն

Մոսկվա, 29 մարտի

«ՊԱՏՄԱԲԱՆԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ»

—

Եղիշէ քահ. Գեղամեանի մի նամակը, «Հովիտ» շաբաթաթերթի № 4-ում տպագրված, որի վերնագիրն էր՝ «Թէ երբ ես պահպանողական դարձայ», ինձ վրա անախորժ տպաւորութիւն գործեց նրանով, որ «պատմաբան» համարվող մարդը պարզապէս յայտնվում է փաստերը կամայականօրէն յեղաշրջող ու խարդախող։

Վերոյիշեալ գրութեան մէջ հայր Գեղամեանը ասում է. «Վերջին ռուս-թիւրքական պատերազմից անմիջապէս յետոյ՝ Կովկասի հայերի մէջ արագ-արագ կամաւոր խմբեր կազմվեցին՝ Թիւրքաց սահմանն անցնելու և այնտեղ խլրտումներ առաջ բերելու համար»։ Քիչ յետոյ էլ ասում է. «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու և մի քանի այլ բարձրաղիր անձանց ձեռներէցութեամբ ու ղեկավարութեամբ՝ Թիֆլիսում մի կենտրոնական կօմիտէտ էր կազմված, որ կարճ միջոցում իր ենթակօմիտէտներն ունեցաւ գաւառական քաղաքներում»։

Այդ ժամանակվայ անցքերին լաւատեղեակ անձինք վկայում են թէ՝ գիտակցաբար սուտ է խօսում նամակագիրը, ասելով թէ՝ Թիւրքահայաստանի վերաբերեալ ազատագրական շարժումները ռուսահայերի մէջ սկսվեցին 1877—78 թ. ռուս-թիւրքական պատերազմից երկու թէ երեք տարի յետոյ, այն է՝ 1880—1881 թւականներին։ Իսկ թէ Գրիգոր Արծրունին միացած ինչ-որ «բարձրաղիր անձերի» հետ՝ «ձեռներէցութիւն է ունեցել և ղեկավարել է» «կենտրոնական կօմիտէտ կազմելու» Թիֆլիսում. կարդալով Րաֆֆու վէպերը «Մշակի» մէջ հրատարակված՝ տաք-գլուխ երիտասարդները կարող էին շարժվել և գործել Գր. Արծրունու անունով, բայց Արծրունին անհատապէս երբէք չէ խառնվել որևէ յեղափոխական շարժման մէջ, ոչ ոքի չէ յորդորել և ոչ մի ժողովի երբէք չէ մասնակցել, թէև խիստ բնական է, որ նա կարող էր լիովին համակրել Թիւրքահայաստանի ազատագրական գործին։

Յայտնի է թէ՝ ռուս-թիւրքական պատերազմից անմիջապէս յետոյ, այսինքն 1879 թ., նախ՝ ոչ մի ազատագրական շարժում չը կար ռուսահայերի մէջ, երկրորդ՝ այդ ժամանակ Գեղամեանը Ախալցխայի քաղաքագլուխն էր և՝ իր իսկ ասելով՝ 1870 թւից ի վեր «Մեղուի» աշխատակից. իբր ասածը մի տեսակ փաստական ձևակերպութեամբ պարտկելու համար՝ նա ասում է, թէ իր մոլորութիւնից նա անդրադարձաւ միայն այն ժամանակ, երբ առիթ ունեցաւ խօսելու՝ Կովկասի Փոխարքայի առանձին յանձնարարութեանց մի ինչ-որ պաշտօնեայի հետ...։ «Մեղուին» աշխատակցելով և Ախալցխայում ապրելով ինչ պէտք ունէր նա պաշտօնական անձի կարծիքը հարցնելու Թիւրքահայաստանի ազատագրական գործի մասին, երբ նա կուրօրէն ղեկավարվում էր Պետրոս Սիմէօնեանցի կարծիքներով, որի հետ շարունակ գրաւոր և անձնական յարաբերութեանց մէջ էր գտնվում։ Եւ միթէ տէրութեան պաշտօնեայի կարծիքը աւելի համոզիչ կարող էր լինել նրա համար, քան թէ Պետրոս Սիմէօնեանցի նման մի հին ազգային գործիչի կարծիքը։ Թեթևամտութիւն է ցոյց տալիս հայր Գեղամեանը, ասելով թէ նա «պահպանողական դարձաւ և ձեռք քաշեց հայկական ազատամտութիւնից միայն Թիւրքահայաստանի խնդիրը ծագելուց յետոյ, երբ նա խօսեց այդ մասին Պետրոս Սիմէօնեանցի հետ»։ Մի մարդ, որը 1870 թւից ի վեր եղել է միայն «Մեղուի» անձնուէր աշխատակիցը. մի մարդ, որը «Հայկունի» ստորագրութեամբ մոլեռանդ պայքար է մղել Րաֆֆու գրուածքների դէմ. մի մարդ, որ երբէք չէ համակրել և չէ մասնակցել Թիւրքահայաստանի ազատագրական շարժման, ստախօսի դրութեան մէջ չէ դնում արդեօք ինքն իրան, ասելով թէ հայկական ազատամտութիւնից ձեռք քաշեց և պահպանողական դարձաւ միայն 1878—1879 թւերին, երբ խօսեց մի անգամ Պետրոս Սիմէօնեանցի հետ։ Մի տեղ նա ասում է թէ՝ դարձեալ Պետրոս Սիմէօնեանցի հետ խօսելով՝ նա հասկացաւ թէ՝ «ազգային ինքնուրոյնութեան գործերը եղել են՝ եկեղեցին, լեզուն և ազգային լաւ բարքերն ու սովորութիւնները»։ Զարմանալի բան է. Խալիբեան դպրոցում ուսած և գրագէտի անուն ստացած Գեղամեանը տասնեակ տարի «Մեղու» կարդալով և նրան աշխատակցելով ընդունակ չէ եղել հասկանալու այն պարզ բանը, որը հասկացաւ միայն, երբ մի անգամ խօսեց Պետրոս Սիմէօնեանցի հետ։

Տիգրան Պայազատ

Մոսկվա

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՕՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Լեբեդևի ռուսաց դրամատիկական խումբը չորեքշաբթի, ապրիլի 13-ին, ներկայացրեց Թիֆլիսի Արքունական թատրօնում «Մասօններ կամ Ազատ որմնադիրներ» պատմական դրաման, 4 գործողութեամբ, հեղ. Բէզպեաստովի։ Դրամայի նիւթը վերցված է Ելիզավետա Պետրօվնա կայսրուհու թագաւորութեան շրջանից, երբ մասօնականութիւնը տարածվել էր Պետերբուրգի բարձր շրջաններում, ուստի և նրա մէջ հանդէս են բերված թէ մասօնները և թէ նրանց վարդապետութիւնը։

Անցքը կատարվում է Պետերբուրգում 1724—1762 թւականներին։ Գլխաւոր հերոսներն են երիտասարդ ազնւական Բօրիս Մանօլսկին, որ սկզբում եղել էր գվարդիայի մայոր Սելիվանովի կնոջ՝ Զինաիդայի սիրականը, բայց լուսաւորվելով իր ընկեր Շուվալովի ձեռքով մասօնների վարդապետութեան մասին՝ զզվում է իր վարմունքից և ձգտում է լինել անդամ մասօնական լօժայի։ Միևնոյն ժամանակ նա մաքուր սիրով սիրում է կայսրուհու կամէր-ֆրէյլին Մարիային և դառնում է նրա փեսացուն։ Գաղտնի ոստիկանութեան պետ Գուբաստովի խնդրանքների պատճառով, սկսվում է հալածանք մասօնների դէմ, որոնք, ընդունելով իրանց մէջ Բօրիսին, յանձնում են նրան միսսիա՝ գաղտնի ցեկուցանել կայսրուհուն, լուսաբանել նրա միտքը մասօնական վարդապետութեան մասին, համոզել, որ մասօնները հաւատարիմ հպատակներ են և իրանց ուսումը հակապետական ոչ մի տարր չէ պարունակում, և խնդրել հրամայել, որ հալածանքները դադարեն։ Բօրիսը խոստանում է և աղաչում իր նշանածին՝ Մարիային՝ խնդրել կայսրուհուց նախ թոյլ տալ իրանց ամուսնութիւնը, երկրորդ՝ ընդունել իրան՝ Բօրիսին իր ներկայութեան։ Բայց հանգամանքները ձախորդ կերպով են դասաւորվում Բօրիսի համար։

Մարիան կարողանում է ստանալ կայսրուհու համաձայնութիւնը, բայց այն րօպէին, երբ նա ուրախ ուրախ դուրս է գալիս կայսրուհու սենեակից՝ աւետելու Բօրիսին, որ նրան պէտք է սպասէր մօտիկ դահլիճում, նա գտնում է մահացած այդտեղ Բօրիսին, որին սպանել էր Զինաիդայի ամուսին Սելիվանովը, որ իմացել էր, թէ ով է եղել իր կնոջ սիրականը։

Դրաման գործում է ուժեղ տպաւորութիւն։ Բօրիսի դերը կատարում էր Երմօլովը, իսկ Մարիայի դերը՝ օր. Մալախիանովան։ Կոմս Գուբաստովի դերը կատարում էր Ուսպէնսկին, իսկ Զինաիդայի դերը՝ տ. Իլինա Պետրօնեան, որոնք մեծ աջողութեամբ տարան իրանց դերերը։ Թատրօնը լի էր և դերակատարները արժանացան աղմկալից ծափահարութիւնների։ Հ. Ա.

—

Իգդիր, 4 մարտի

Դերասան Ամօ Խարազեանն իր խմբով երրորդ և վերջին ներկայացումը տուեց։ «Ոճրագործի ընտանիքի» ներկայացումը բաւական մեծ թւով հանդիսականներ էր գրաւել. դերակատարները բոլորն էլ աջող տարան իրանց դերերը և արժանացան բուռն ծափահարութեան։ Ամօ Խարազեանին մենք տեսանք տասն տարի առաջ Իգդիրում. շատ շատ ուրախ ենք, որ այսօր տեսնում ենք բաւական աջող կերպով առաջադիմած։

Ս. Զ.

—

Թաւրիզ, 7 ապրիլի

Նորեկ դրամատիկական խումբը իր ներկայացումները տուեց մինչև ապրիլի 6-ը Բերդաթաղի և Լիլաւայի թատերասրահներում փոխ առ փոխ։ Երկթաղի թատերաբեմերում ներկայացվեցին 11 դրամա, որոնցից նշանաւոր են «Տրիլբի», «Պաշտպան», «Տայֆուն», «Դաւաճանութիւն» (Արշ. Յարութիւնեանի բենեֆիսին), Գօրդինի «Սատանան» (Զարիֆեանի բենեֆիսին), «Անյայտ կինը» (տիկ. Մայսուրեանի բենեֆիսին), «Ուխտավորներ» և մի քանի վօդեվիլներ՝ Չեխօվի «Արջը», Պարոնեանի «Բաղդասար աղբարը» և այլն։

Դրամաներից ամենահետաքրքրականներն էին 1) «Տայֆուն» պիէսը, որի մէջ ռէլիէֆ ձևով հանդէս բերվեցին եապօնացու խորամանկը, բայց և վառ հայրենասիրական բարքերը հանդէպ եւրօպացու բարքերի և նրանց անձնուրաց ձգտումը՝ ուսումնասիրելու և իւրացնելու համար Արևմուտքի քաղաքակրթութիւնը՝ ի փառս և յօգուտ իրանց սիրելի հայրենիքի՝ Եապօնիայի։ Հարկ է ակամայ խոստովանել, որ Թաւրիզի երկու թատերասրահների դէկօրացիաները և այլ յարմարութիւնների խոշոր պակասը ստուեր էր ածում աշխատանքով կատարված խաղերին։ Ուր էր թէ Թաւրիզի թատերասէր հասարակութիւնը փոքր ինչ ուշադրութիւն դարձնէր յիշածս թերութիւններին և մերթ ընդ մերթ ներկայացումներով ու երեկոյթներով լրացնէր որոշ չափով այդ զգալի պակասը։

2) Գօրդինի «Սատանան»։ Թաւրիզի թատերասէր հայ հասարակութիւնը հետևում էր «Սատանայ» դրամայի ներկայացմանը։ Իրօք որ Գօրդինի տաղանդաւոր մտքի արտադրութիւն «Սատանայ» դրաման շատ ու շատ ժամանակակից է և միանգամայն պատկերացնող մեր հասարակութեան որոշ դասի քարացած բարքերը։ Ի՞նչ տիպեր ու հայեացքներ են բեմ դուրս գալիս այստեղ, որոնք որպէս ի հայելւոջ ցոլացնում են մեր մեշչանական դասի պատկերը։ L'argent fait tout,—այս է տիրող հայեացքը։ Մտնել ընտանիքի մէջ, փչացնել բարքեր ու վարքեր, փողի ոյժով քարուքանդ անել, ոտնատակ տալ թէ պատիւ, թէ բարոյական կեանք, և անվրդով խղճով մի կողմ կանգնել և ծիծաղել դրամով գնած զոհի վրա։ Ամեն մի կեղտ, ամեն մի ապականութիւն արդարանում է փողաւոր մէշչանի աչքում և պարուրվում ոսկէ ծածկոցի տակ։ Ահա թէ ի՛նչ ծառայութիւն կարող են մատուցանել «Սատանայի» պէս դրամաները թիւր տեսակէտների գերի անհատներին, որոնց թիւը դժբաղդաբար քիչ չէ մեր հասարակութեան մէջ։

Շնորհալի ներկայացումները արդէն անհերքելի պահանջ են դառել մեր հասարակութեան համար, ապացոյց՝ որ, չը նայած նիւթական անձուկ կացութեան, Թաւրիզի հայ հասարակութիւնը զոնդագոնդ յաճախում էր թատրօն և բաւականութիւն տալիս իր հետաքրքրութեան։

Ապրիլի 3-ի տխուր պատահարից յետոյ միայն քիչ էր հասարակութեան թիւը ներկայացումներին՝ իբրև զզուանքի արտայայտութիւն տեղի ունեցած դէպքի մասին։

Ապրիլի 6-ին, Լիլաւայի թատերասրահում, խումբը տուեց իր վերջին երեկոյթ-պարահանդէսը՝ սիրողների աջակցութեամբ, Լիլաւայի Հայկազեան-Թամարեան ուսումնարանի օգտին։ Նուագում էր ռուսաց զինուորական մուզիկը։ Պարերեկոյթը անցաւ աջող։

Այսօր, ապրիլի 7-ին, խումբը մեկնեց դէպի Կովկաս։ Ցանկալի է, որ գէթ տարին մի անգամ այցելեն Թաւրիզ և դրանով պատճառեն գեղարուեստական բաւականութիւն պարսկահայ հասարակութեան։

Հայկազուն

—

Էնզելի, 25 մարտի

Այստեղ հասնելով պ. Մանուէլեանի և տ. Փառանձեմի դերասանական խումբը՝ մէկ-մէկու ետևից երկու ներկայացում տալով անցաւ Րաշտ։

Ինչպէս երևում է, նրանք այնքան էլ լաւ աջողութիւն չեն ունենալու նիւթական կողմից այս շրջանում, որովհետև ժողովուրդը նիւթապէս քայքայված դրութեան մէջ է գտնվում թէ շարժումներից և թէ մօտերս յաճախ կրկնվող ներկայացումներից պարսկերէն, հայերէն և այլ լեզուներով։

Մուշահիդ

ՄԱՔՍ ՌԷՅՆՀԱՐԴՏԸ ՄԱՅՐԱՔԱՂԱՔՈՒՄ

(Նամակ Պետերբուրգից)

—

Պետերբուրգ, 27 մարտի

Մեր թատրօնական կեանքի սովորական գորշ հօրիզօնի վրա ծագեց մի փայլուն աստղ։

Մեզ մօտ հիւր է եկել հռչակաւոր Մաքս Ռէյնհարդտը։

Դա նշանաւոր անուն է։

Եթէ Ռուսաստանում յայտնի է Մօսկվայի «Գեղարուեստական թատրօնը», Գերմանիայում աւելի ևս յայտնի է Մաքս Ռէյնհարդտը։

Նա բերել է իր հետ Սօֆօկլի «Էդիպ արքայ» պիէսը, Հօֆմանստալի փոխադրութեամբ և խմբագրութեամբ։

Առիթ ունենալով շատ մօտից ծանօթանալու այդ պիէսի ներկայացման մանրամասնութիւններին Պետերբուրգում, աւելորդ չեմ համարում ասել մի քանի խօսք ներկայացման մասին։

«Էդիպ արքայի» ներկայացումը Բեռլինում այնպիսի մի մեծ տպաւորութիւն է գործել, որպիսին շատ քիչ է բաժին ընկնում ուրիշ բեմական գրուածքներին։

Ներկայացումը նմանեցրած է հին հելլէնական ներկայացումներին։ Եւ այդ պատճառով թէ Բեռլինում և թէ այստեղ Պետերբուրգում Մաքս Ռէյնհարդտը յարմարեցրել է այդ նպատակով ցիրկը։ Եւ ներկայացումը տեղի ունեցաւ Չինիզելլի ցիրկում։

Բեմը շրջածածկված է սև գոյնով։

Հանդիսականների առաջ բարձրանում է մի հսկայական սանդուղք սև մարմարիոնից, որի վրա կանգնած են վիթխարի սևագոյն սիւներ, որոնք վերացած են դէպի երկինք։ Խորքում զետեղված է ծանր սև դուռն, զարդարված հնագոյն նկարներով՝ սևացած ոսկուց։

Պալատի կողքերին վառվում են կրակներ։ Կարմիր բոցը՝ խառնված ծխի հետ՝ լուսաւորում է սև սիւները տպաւորիչ ստուերներով։

Մէջ տեղում զոհարանն է, զարդարված դափնիներով։

Ներկայացումը տևում է երկու ամբողջ

Ներկայացումը կատարվում է ամբողջ բեմի վրա, ինչպէս եղել է հին թատրոնում։

Արքայական պալատի մուտքի դէմ ցիրկի գլխաւոր մուտքն է հասարակութեան համար։

Ահա այդ մուտքից ներս է գալիս մի մեծ ամբոխ, բաղկացած աւելի քան 200 հոգուց։ Դրանք քաղցած, պատառոտուն շորերով, հիւանդ, տանջված, ժանտախտից տառապած, ուժասպառ անձիք են, որոնք գնում են դէպի սև մարմարեայ պալատը։

Երկու ռեֆլեկտոր մանիշակագոյն փայլով լուսաւորում են բեմը։

Լսվում են փանփարների ձայներ, գոնգի բաղխումների խուլ զանգիւններ։ Կուլիսների ետևից գալիս է տրտնջացող ժողովրդի խուլ մրմունջը։ Քանի գնում՝ աղմուկը մեծանում է, սաստկանում և դառնում մի վայրենի սուգ և ոռնոց։ Փանփարները և փողերը հնչում են աւելի ևս բարձրաձայն։ Վերջապէս նրանք բացում են մուտքի վարագոյրը և ամբողջ այդ բազմութիւնը բեմ է բարձրանում։ Ձեռքերը մեկնած դէպի պալատ, բոլորը աղաղակում են.

— Էդիպ արքայ, օգնիր մեզ. մենք մեռնում ենք. Էդիպ արքայ, մենք քաղցած ենք, օգնիր մեզ։

Երկար հնչում է այդ սուգը, մինչև որ բացվում են ծանր սև դռները և դուրս է գալիս Էդիպ արքան սպիտակ զգեստաւորութեամբ։

Էդիպի դերը կատարում է Մօյսսին։ Դա հոյակապ մի դերասան է։ Խաղում է զարմանալի հասարակ ձևով, գրաւիչ աղնուութեամբ։ Մի հրաշալի ախորժալուր ձայն ունի։

Եւ ահա սկսվում է Մօյսսի—Էդիպի հոգու մեծ ողբերգութիւնը։ Էդիպը յուսահատված է։ Նա անկարող է օգնել ժողովրդին։ Եւ իր անհուն վշտի մէջ նա կուրացնում է իրան և վճռում է մատնել իրան փախուստի։

Երբ Մօյսսին վիրաւոր աչքերով, պատառված զգեստով դուրս է գալիս բեմ վերջին անգամ, օրհնում է փոքրահասակ իր զաւակներին և ընկնելով ու սայթաքելով հեռանում է պալատից դէպի մուտքը,—հանդիսականի առաջ ներկայանում է մի սարսուռ բերող տեսարան։

Յետոյ մթնում է ամբողջ ցիրկը և նրա հետ միասին բեմը։ Լսվում են ամպերի որոտներ. հեռուից գալիս են փանփարների և գոնգի ձայներ։

Հանդիսականը տեսնում է միայն սև սիւները թոյլ կերպով լուսաւորված՝ ջահերի արիւնագոյն փայլով։

Պալատի միջից հնչում են կանացի ծառայողների վշտալից հառաչանքները Էդիպ արքային։

Ներկայացումը տպաւորութիւն է գործում հանդիսականի վրայ։

Պետերբուրգում Մաքս Րէյնհարդտի ներկայացումները մեծ աջողութիւն ունեն։ Ծափահարութիւնները անվերջ են։

Բուռն ծափահարութիւնների առարկայ է ինքը Րէյնհարդտը։ Նա՝ փոքրահասակ մի անձ՝ կանգնած սև սիւների մէջ՝ ընդունում է հասարակութեան ողջոյնները։

Ես ներկայ էի կրկնութիւններին և տեսնում էի գործի նախապատրաստական աշխատանքները։ Դա շատ ուսանելի էր։

Մաքս Րէյնհարդտը երիտասարդ մի անձ է, 32—33 տարեկան, ծագումով հրէայ։ Փոքր հասակով, չափազանց լուրջ, տխրող հայեացքով և անխիսի ձայնով, որ ոչ ոքի մօտով չի անցնի չը լսել նրան։ Նա խօսում է քիչ։ Դերասանները, աշխատակիցները, մօնտեօրները վերաբերվում են դէպի նա՝ իբրև մի կուռքի։ Նա նստած է կարծես անտարբեր, բայց նրա աչքերը արտայայտում են յուզմունք և տենդ։

Նրա ներկայացումներին ազատ տեղեր չը կան թատրոնում. լինում են ամեն խաւից անձեր. եղան բարձր կարգերից պետական մարդիկ։ Ի. Ք.

Հաղորդենք մի քանի տեղեկութիւններ ևս Րէյնհարդտի ձեռնարկած գործի մասին։

Րէյնհարդտի անունը ներկայումս մեծ հռչակ է վայելում։

Անցեալ տարի Գերմանիայում երևաց նրա մասին մի յատուկ աշխատութիւն «Mat Reinhardt» վերնագրով։ Հեղինակը, գերմանական յայտնի թատերական «Schaubuene» թերթի խմբագիր Զիգֆրիդ Եակօբսօնը խոշորագոյն նշանակութիւն և գին է տալիս Րէյնհարդտի նախաձեռնած գործին։ Մի յատուկ ժողովածուի մէջ՝ «Deutsches Theater» անունով՝ Րէյնհարդտի թատրօնական նորամուծութիւններին գովեստներ են շռայլում և նշանաւոր գրական քննադատ Բրանդէս, և Գարդէն, և Օսկար Բի, և Իւլիուս Բաբ։

Րէյնհարդտի դերասանական խումբը խաղում է Բեռլինի երկու թատրօնում—Deutsches Theater և Kammerspiele—գեղեցիկ ոյժերով։ Էդիպի դերը կատարում են Պաուլ Վեգեներ և Ալէքսանդր Մօիսսի։ Վեգեները Բեռլինի սիրված դերասանն է։ Մօիսսին, որ ներկայումս Ռուսաստան է եկել, մի շնորհալի երիտասարդ է, ծագումով իտալացի, հմայիչ խաղով և բանաստեղծական աւիւնով։

Իբրև ռեժիսեոր, իբրև բեմական տպաւորիչ տեսարանների կազմակերպող, իբրև գոյներ դասաւորող, դիրքեր յօրինող և բնորոշ հանդիպումներ ծրագրող՝ Րէյնհարդտը առաջնակարգ մի ոյժ է ներկայումս Եւրոպայում։

Եւ շատերը նայում են նրա վրա՝ իբրև թատրօնական մի աչքի ընկնող բարենորոգչի, թատրօնական վերածնութեան մի գործողի վրա։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱՑՈՒՄ

Իտալիան վերջին օրերս ամբողջապէս զբաղված էր նոր պրեմիէր-մինիստր Ջիօլիտտիի վերոյիշեալ պաշտօնին կոչվելու հարցով, որպիսի երևոյթը ոչ ոքի համար անակնկալ չէր, որովհետև պարլամենտական կուսակցութիւնների ներկայ դասաւորութեան շրջանում այլ կերպ չէր էլ վճռվի այդ հարցը, քանի որ Ջիօլիտտին միակ անձնաւորութիւնն է, որը կարող է իր շուրջը համախմբել ներկայ պարլամենտի անդամների մեծամասնութիւնը, որպիսի հանգամանքը առհասարակ կարևոր նշանակութիւն ունի պարլամենտական երկիրների կեանքում։ Ջիօլիտտին չորրորդ անգամն է արդէն, ինչ կոչվում է թագաւորից այդ պաշտօնի համար, և նրա երևումը կրկին մեծ փոփոխութիւններ կը մտցնէ Իտալիայի հասարակական և քաղաքական կեանքում, թեքելով նրան անշուշտ դէպի ձախ։ Նշանաւոր է նմանապէս և այն, որ ներկայ կաբինետի կազմումի ընթացքում խոշոր դեր կատարեցին՝ իրանց գոյութեան ընթացքում առաջին անգամ՝ իտալացի սօցիալիստները, չը նայած որ նրանք առ հասարակ ժխտում են արքայական և բուրժուազական մինիստրական կազմերի մէջ մասնակցելու հարցը։

Ինչպէս մեր ընթերցողները գիտեն, սօցիալիստների պարագլուխ Բիսսօլատին, որը մինչև ներկայ տարվայ սկիզբը խմբագրում էր սօցիալիստական կուսակցութեան կենտրօնական օրգանը, ունկնդրութեան կոչվեց արքայից։

Եւ Բիսսօլատին իր մարքսիստական աշխարհհայեացքի համար վիրաւորական չը համարեց ոտք կոխել Կվիրինալի շեմքից ներս, ընդունելով արքայի հրաւէրը։

Բնորոշ է, որ Բիսսօլատին գնաց արքայի հետ տեսակցելու ոչ թէ պաշտօնական ցիլինդրով պճնված, այլ իր հասարակ և սովորական հագուստով, որովհետև, ինչպէս պարզվեց, նա չէ ունեցել ոչ ցիլինդր և ոչ էլ ֆրակ։ Բայց այս հանգամանքը չը խանգարեց ամենևին, որ նա արքայի մօտ գտնէր սիրալիր ընդունելութիւն, որը տևեց մէկ ժամից աւելի և որի ընթացքում Բիսսօլատին պարզեց բարենորոգումների ամբողջ ծրագիրը, գտնելով Վիկտօր-Էմմանուէլի կողմից միանգամայն համակրական և ուշադիր վերաբերմունք։

Ծրագրի գլխաւոր կէտերը հետևեալներն են. 1) 40 միլիօն լիրայի յատկացում բանւորական կենսաթոշակի ֆոնդի օգտին, 2) կրճատումն զինուորա-ծովային ծախքերին յատկացված բիւջէի 50%-ով և 3) ընդհանուր ընտրական իրաւունք։

Բնորոշն այն է, որ Ջիօլիտտին անպայման աշխատում էր համոզել Բիսսօլատիին՝ մինիստրական նոր կաբինէտի կազմի մէջ մտնել, առաջարկելով նրան մինիստրական պորտֆէյլ։ Նա այդ կերպ վարվելով՝ արդեօք ուզում էր պարլամենտի ձախ թևի կողմնակցութիւնը գրաւել միայն, թէ իր ծերութեան ընթացքում իրօք որ նպատակ ունէր արմատական բարենորոգումներ մտցնել երկրում այդ մնում է առ այժմ անյայտ։

Բիսսօլատիի մինիստր դառնալու խնդիրը արդէն համարեա թէ որոշված մի խնդիր էր, երբ նա ամենքի համար անսպասելի կերպով մերժեց այդ պաշտօնը, որով և վերջ տուեց այն անվերջ յարձակումներին, որոնք կատարվում էին չափաւոր-ազատամիտների բանակի կողմից Ջիօլիտտիի վրա, որին պատկանում է նմանապէս վերջինս։ Չափաւոր-ազատամիտները, որոնք իտալական պարլամենտի կենտրօնն են կազմում, չէին կարողանում հաշտվել այն երևոյթի հետ, որ մի սօցիալիստ՝ իր մի քանի ընկերներով՝ կարևոր դեր պիտի կատարէ մինիստրութեան մէջ։ Բիսսօլատին իր մերժումը պատճառաբանում էր նրանով, որ ինքը որպէս սօցիալիստ իր համար անտանելի է համարում պարտադիր ձևականութիւնների կատարումը, որը պիտի գործադրէ մինիստր եղած ժամանակ։

Հաւանական է և այն, որ Բիսսօլատին վերջին օրերի ընթացքում եկաւ այն եզրակացութեան, թէ ցանկալի բարենորոգումների իրագործումը նոր կաբինէտի շնորհիւ՝ դժուար իրականանալու մի գործ է, և դրա համար էլ հրաժարվեց։

Չը նայած այս ամենին, այնուամենայնիւ Ջիօլիտտիի գործունէութեան նախագծի միջով կարմիր թելի նման անցնում է ռամկավարական ոգով բարենորոգումներ մտցնելու իղձը, քանի որ նրա դրօշակը փողփողում է ընդհանուր ընտրական իրաւունքը մտցնելու ցանկութեան վերտառութեամբ, մանաւանդ որ կաբինէտը բաղկացած է աւելի արմատական-ազատամիտ տարրերից, որպիսին պարլամենտական լեզուով կոչվում է աւելի ձախ, քան նախկին պրեմիէր մինիստր Լուցցատիի կազմած մինիստրական կազմը, որը վերջերս տապալվեց։

Մօտ ապագան ցոյց կը տայ սակայն, թէ որ աստիճան իրական են Իտալիայի զաւակների ակնկալութիւնները։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Պեօտր Թագաւորը Բուդապեշտ կը հասնէ մայիսի 7-ին։

◆ Հետևելով անգլիացի ուսանողների օրինակին, շվէդացի ուսանողները ևս վճռել են այս ամսի վերջերին կազմակերպել Շվեդիայի բոլոր քաղաքներում այսպէս կոչված շվեդական շաբաթ, որի ընթացքում վաճառվելու են բացառապէս շվեդական ապրանքներ։

◆ Ցետինիէից հեռագրում են, որ մալիսօրների շրջանում տեղի ունեցած կռւում թիւրքաց զօրքերը ունեցան խոշոր կորուստներ։ Թիւրքերի դրութիւնը աննպաստ է։

◆ Չինացիների արտաքսումը Վլադիվոստոկից շարունակվում է ռուսների ձեռքով։ Չինական իշխանութիւնները բողոքում են։

◆ Չինական զինուորական մինիստրը հաստատեց ընդհանուր զինուորական ծառայութեան նախագիծը։

◆ Հրաժարական տուեց Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտի վերատեսուչ պրօֆ. Սալազկինը։

◆ Մոսկվայի ուսումն. շրջանի հոգաբարձուն տեղեկացրեց համալսարանի ռեկտօրին, որ պրօֆ. իշխ. Տրուբեցկոյի և Գ. Վինօգրադօվի հրաժարականն ընդունված է։

◆ Մոսկվայի մօտերը որսի ժամանակ ինքնասպանութիւն գործեց յայտնի մանուֆակտուրայի ներկայացուցիչ (Նախկին Նաւթային ֆիրմայի) Գ. Շիբաջէվը 35 տարեկան։ Պատճառն առ այժմ յայտնի չէ։

◆ Կարմիր Խաչի գլխաւոր վարչութիւնը Սիմֆերոպոլի նահանգական զեմստվօյին պահանջ ներկայացրեց՝ վերադարձնել ռուս-ճապոնական պատերազմից մնացած հիւանդանոցային 300 հազար րուբլին։ Զեմստվօն մերժում է։

◆ 1910 թւի ընթացքում Ռուսաստանում լոյս են տեսել 29,057 նոր գրքեր՝ ընդդէմ 1909 թ. 26,638-ի։

◆ Մինիստրների խորհուրդը ընդունեց Դումային ներկայացնելու համար մի օրինագիծ՝ անասուններին ի զուր տեղը չարչարելու համար պատժելու մասին։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

13 ապրիլ

ԲՐԱՒԼՕՎ։ Այրվեցին 18 տներ։ Վնասները 2 միլիօն ֆրանկ են։

ԽԱՐԲԻՆ։ Մուկդէնի գեներալ-նահանգապետը պաշտօնանկ արեց նահանգապետ Լուբենֆուին պայմանագրի հակառակ ռուս վաճառականներից տուրքեր առնելու համար։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Դեկտեմբերի երկրորդ կէսերին Պետերբուրգում տեղի կունենայ կանանց բժիշկների և մանկաբարձուհիների համառուսական համագումարը։

Առևտրի մինիստրի օգնական Միլլերի տիֆը թեթև աստիճանի է։

ՏՈՒԼԱ։ Բացվեց թռչնապահութեան ցուցահանդէս։

ՆԻԺՆԻ-ՆՕՎԳՕՐՕԴ։ Բացվեց տնային թռչնապահութեան ցուցահանդէս։

ԲՈՒԷՆՕՍ-ԱՅՐԷՍ։ Ռիօ-Զուէլօ գետը վարարվելով ծածկել է շրջակայքը և քաղաքի հարթ մասը։ 500 ընտանիք տեղաւորվել են եկեղեցիներում և դպրոցներում։

ԲԵՐԼԻՆ։ Այստեղ ոգևորութեամբ քննվում է կարդինալ Լէդօխովսկիի մարմինը Պօզնանի տաճարում թաղելու խնդիրը։ Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ թոյլտուութիւնը կը տրվի։ Նացիօնալիստ շրջանները դրանում տեսնում են կառավարութեան զիջողութիւնը լեհերի վերաբերմամբ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկացի մարդկային բարերարները

Ամերիկացի յայտնի միլիարդէր Կարնէջին անում է, ինչպէս յայտնի է, ամեն տարի շատ խոշոր նուիրատւութիւններ զանազան պետութիւններին՝ խաղաղութեան գաղափարի քարոզի համար հաստատութիւններ հիմնելու։

«Revue Suisse»-ի վերջին համարում, Կարնէջիի նոր նուէրի առիթով, բերված է բոլոր մարդասէրների 1910 թւին կատարած բարեգործութիւնների թիւը։ Ընդամենը այդ տարում արվել են նուէրներ 600 միլիօն մարկ։ Այդ գումարով բաւական էր ծածկել Միացեալ-Նահանգների զօրքի ու նաւատորմի բոլոր ծախսերը տարվայ ընթացքում։ Եթէ այդ փողերը բաժանվեն Միացեալ Նահանգների բոլոր բնակիչների մէջև, այդ դէպքում ամեն մէկին բաժին կը հասնէր 7 մարկ։

1909 թւին նուիրաբերութիւնների ընդհանուր թիւը դեռ աւելի է. նա հասաւ 720 միլիօն մարկի։ 1910 թւի նուիրատուների թւումն են Կարնէջին, որը նուիրեց համարեա 72 միլիօն մարկ, յետոյ Րօկֆելլէրը—68 միլիօն, Իսահակ Վէյմանը—40 միլիօն, մետաղի տրեստը—32 միլիօն, տ. Րուսէլ Սաժէն—15 միլիօն, Պ. Մորգանը—10 միլիօն, և այլն։

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Աւետեան-Լիսիցեանի «Ցիրկ-Սպօրտի» շինութիւնը վերջին տօնական օրերում լի էր լինում հասարակութեան խուռն բազմութեամբ, որի գլխաւոր պատճառը միջազգային ըմբիշների ըմբշամարտն է, ղեկավարութեամբ Ի. Վ. Լէբէդևի (Քեռի Վանեա)։ Նախ քան ըմբշամարտը տեղի են ունենում սինեմատօգրաֆային ներկայացումներ և այլ հետաքրքրական համարներ։

Ըմբշամարտը հետաքրքրական է առաւելապէս այն տեսակէտից, որ նրանում մասնակցում են զանազան ազգութիւններին պատկանող հռչակաւոր ըմբիշներ, որոնցից ոմանք խոշոր ոյժի տէր և հսկայամարմին անձեր են, մարմնի համաչափ և գեղեցիկ կազմուածքով, իսկ ոմանք էլ ճարպիկ և դիւրաթեք ու ճկուն շարժումներով են օժտված։

Եթէ ընդունենք սպօրտի և մասնաւորապէս ըմբշամարտի անվիճելիութիւնն ու օգտակարութիւնը, ապա այդ տեսակէտից Լէբէդևի կազմած ըմբշամարտը ամենահետաքրքրականն է, գաղափար կազմելու միջազգային ֆրանսիական ըմբշամարտի նըկատմամբ. բացի վերոյիշեալից ի ցոյց են դրվում և այլ հետաքրքրական համարներ։

Ներկայիս մասնակցող ըմբիշներից զատ հրաւիրված են նաև այլ յայտնի ըմբիշներ, որոնք մօտ օրերս կը ժամանեն Թիֆլիս, որոնց թւումն է նաև մեր հայրենակից Մայսուրաձէն։ Ըմբշամարտը շարունակվելու է մինչև մայիսի վերջը։ Ուչ-ըմբիշ

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցօվի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.։
Կ. Մ. ՁԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Ջ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.։
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական, վիրաբուժութեան և միզասեռ. հ.։
Ա. Մ. ՓՈՒԼԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.։
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՁԱՑ—12½—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.։
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.։
ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՁԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.։
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.։
Վճարը 50 կ.։ Չքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար պայմանով։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան
3. 0—39

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ս. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12-1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմեօնօվսկայա փողոց, № 16.
Տելեֆոն № 40.
(Ե. ու. Կ.) 220. 100—12

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Մասնագէտ սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։
Սիֆիլիսի բժշկութիւն Էրլիխի «606»-ով
Ընդունե- (12½—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
Հասցէն (Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33.
(Сололаки, уголъ Бебутовской и Паскевича. 33.
(Հ. ու. Կ.) 1134. 100—85

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՏԻ
Խմբագրվում է առաջիկայ
1912
ԲԱՆՎՈՐԻ ԽՈՒՄԲ
„ՇԱՒԻՂ"
ԴՐՊՈՑԻ, ԼՊՈՑԻ ԵՒ ՍԵՂԱՆԻ
◆ ՕՐԱՑՈՅՑՆԵՐ ◆
«Շաւիղ» օրացոյցների նպատակն է ծառայել հասարակութեան ինքնագիտակցութեան զարգացմանն իբրև շաւիղ, առաջնորդել նրան դէպի բարին, վսեմն ու գեղեցիկը։
«Շաւիղ» օրացոյցներն իբրև գեղարուեստական հրատարակութիւն, տպագրվելու են գունաւոր և պատկերազարդ։
«Շաւիղ» օրացոյցներին մասնակցում են մի խումբ գրական ոյժեր։
«Շաւիղ» օրացոյցները տպագրվելու են մեծ քանակութեամբ և վաճառվելու չափազանց էժան գներով, հակառակ մինչև օրս եղած հրատարակութիւնների։
Գները և բովանդակութիւնը կը յայտարարվի իր ժամանակին։
Խմբագրութիւն «Շաւիղ» օրացոյցների
(Հ. ու. Կ.) 302. 6—6

Լոյս տեսաւ և վաճառվում է
„ԳԱՐՈՒՆ"
գրական-գեղարուեստական ալմանախ
Բ. գիրք
Բովանդակութիւն
Շիրվանզադէ—«Արմենուհի», Ա. Իսահակեան—1) «Անգիր և անյայտ», 2) «Հեծկլտող քամին», 3) «Գիշերը պատեց», 4) «Անյաղթ խալիֆան», Փայլակ—«Թովանք», Արսէն-Երկաթ—«Զեմ կրնար», Ց. Քիւֆէճեան—«Ինչպէս լեհը», Ս. Բաբեան—«Կրակն այս գիշեր», Ո. Անտիփեան—«Berceuse», Չիֆթէ-Սարաֆ—«Սպեղանին», Ց. Ծակուբեան—«Աշխատանքի երգը», Դ. Դեմիրճեան—«Գիշեր է», Մ. Մանուէլեան—«Հէքիաթ», Հ. Նազալեան—«Սև երգեր», Ռ. Սեւակ—«Ինչպէս երբեմն», Մ. Փարամեան—«Ոսկիին ծարաւը», Ա. Ծերենցեան—1) «Նորից մի կարօտ», 2) «Հոգիս վայելեց», Հ. Մազմանեան—«Տրտմութեան խոհերից», Մ. Մանուէլեան—«Աշնան ծաղիկը», Ա. Ծատուրեան—1) «Գեղեցկութեան երգերից», 2) «Սիրավէպ», 3) «Անցիր, ով աղջիկ», 4) Երգն է կանչում», Կ. Միքայէլեան—«Վարդանանց պատերազմը», Վ. Ծէլեան—1) «Հասուած», 2) «Ոսկէ հէքիաթ» գրքից, Կ. Միքայէլեան—«Առաջին վիշտ»։
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ։
Վերադիր վճարով՝ 1 ր. 25 կ.—Ա. և Բ. գրքերը միասին՝ 2 ր. 25 կ.։
Դիմել բոլոր գրավաճառներին կամ МОСКВА, Б. Дмитровка, 9, кв. 50. Г. Микаэляну.
(Հ. Ջ. Ե.) 339. 5—3

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄԱՔՈՒՐ
ԿՕՆԵԱԿ „ԱՐԱՐԱՏ"
ՅԱՏԿՈՒԹԵԱՄԲ
ՄՐՑՈՒԹԻՒՆԻՑ ԴՈՒՐՍ
Վաճառվում է գաստրօնօմիական ամենալաւ խանութներում։ Պահանջներով անմիջապէս դիմել Երևան՝ Ս. Գ. Եղիզարեանին, կամ թէ Թիֆլիսում Գ. Մուղեարսկիին։
(ու. Կ. Ե.) 314. 10—6

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅԻ
ԴԻՒԱՆԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԸ
(ԼՕՐԻՍ-ՄԵԼԻՔՕՎՍԿԱՅԱ ՓՈՂՈՑ, ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՏՈՒՆ)
կատարում է ամեն տեսակ տպարանական աշխատանքներ, այն է՝ տպագրում է լրագիրներ եւ ամսագիրներ, գրքեր, բրօշիւրներ, բլանկներ, աֆիշաներ, ծրագիրներ, հարսանեկան հրաւիրատոմսեր, այցեթղթեր եւ այլն։
Ընդունվում են տպագրական պատուէրներ հետևեալ լեզուներով՝ ռուսերէն, հայերէն, վրացերէն, թուրքերէն, ֆրանսերէն, գերմաներէն, արաբերէն և լեռնականների բարբառով։
Պատուէրները կատարվում են մաքուր, ճշտօրէն և չափաւոր գներով։ Ընդունվում են նաև շուտափոյթ կատարվելիք պատուէրներ առանձին պայմաններով։
Պատուիրողների ցանկութեան համաձայն, տպարանը պատուէրները կարող է կազմել տալ, կամ բրօշիւրներ շինել, ու այնու յանձնել։
ԿԱՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ ԶԱՆԱԶԱՆ ՏԵՍԱԿ ԹՂԹԵՐ ՓՐԷՅՍ-ԿՈՒՐԱՆՏԻ ԳՆԵՐՈՎ։
Տելեֆօն № 67.

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.